ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԵ ՏԱՐԻ ԹԻՒ 120 ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ 2017

Խաչքար՝ Ջուղայի (կրկնօրինակ)

Նոր Ջուղայի առաջին առաջնորդ
Մեսրոպ Արքեպիսկոպոսի եւ
Սպահանի Հայոց Թեմի բոլոր
առաջնորդների յիշատակին

Նախաձեռնութեամբ՝
Սպահանի Հայոց Թեմի
Կրօնական Խորհրդի

Բարերարութեամբ՝
Արշալոյս եւ Ծաղկուշ
Խուդավերդեանների

Կերտուեց 2017 թականին

Գործ՝ Արտակ Համբարձումեանի

Վայր՝ Ս. Ամենափրկիչ Վանք

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսու յայտնում ենք՝ ի գիտութիւն Թեմիս ժողովրդին, որ Թեմիս 16-րդ նստաշրջանի 3-րդ հերթական ժողովը Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի կողմից տրամադրուած եռանուն ցանկից միաձայնութեամբ ընտրեց

ԳԵՐՊ. Տ. ՍԻՓԱՆ Ծ. ՎՐԴ. ՔԷՉԷՃԵԱՆԻՆ,

որպէս Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ:

Սպահանի Հայոց Թեմի
Պատգամաւորական Ժողովի Դիւան
20 մայիս 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 99-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒԻՐԱԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Աւելի քան վեց դար շնչահեղձ գերութիւնից յետոյ, Սարդարապատի, Ղարաքիլիսայի ու Բաշ-Ապարանի հերոսամարտերի յաղթանակներով պսակւած Հայաստանի Հանրապետութեան 99-ամեակի առթիւ, չորեքշաբթի՝ մայիսի 31-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան շրջափակում կազմակերպուեց հանդիսաւոր տօնախմբութիւն:

Երեկոն սկիզբ առաւ հաղորդավար Արթին Քեշիշեանի բացման խօսքով:

Ահա մի հատուածի մէջբերում բացման խօսքից. «Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը հիմնադրուեց հայ ժողովրդի համար ծանր ժամանակաշրջանում եւ գոյատեւեց մինչեւ 1920 թւականի դեկտեմբերի 2-ը: Հակառակ իր կարճատեւ կեանքին՝ սոյն Հանրապետութիւնն իր անգնահատելի եւ առանցքային դերակատարութիւնն ունեցաւ հայկական պետականութեան շարունակականութեան գործում: Մայիսի 28-ը հայ ժողովրդի համար հանդիսացաւ՝ որպէս նոր կեանքի սկիզբ»:

Այնուհետեւ Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի անդամների միջոցով շրջափակ բերուեց Հայաստանի Հանրապետութեան եռագոյն դրօշը, հնչեցին Իրանի Իսլ. եւ Հայաստանի Հանրապետութիւնների օրհներգերը եւ տեղի ունեցաւ Հանրապետական մաղթանք՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ ու թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերի մասնակցութեամբ:

Տօնակատարութեան պաշտօնական բաժնի շարունակութեան մէջ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, թեմի Պատգամաւորական Ժողովի եւ Թեմական ու Կրօնական խորհուրդների ատենապետեր՝ Թաթուլ Օհանեանը, Վարուժ Մինասեանն ու Վարուժ Մովսիսեանը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանը եւ երեկոյի բանախօս Հայաստանից հրաւիրուած ազգային-քաղաքական գործիչ Աշոտ Սիմոնեանն ընդունեցին աւանդոյթ դարձած հանդիսաւոր շքերթը՝ մասնակցութեամբ թեմի ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների ու երգչախմբերի վարչութիւների, երիտ-պատանեկան միութիւնների անդամների, հայոց ազգային դպրոցների աշակերտութեան ու անձնակազմերի, ՀՀ հիմնադրման 99-ամեակի տօնակատարութեան յանձնախմբի եւ Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի անդամների:

Այնուհետեւ բանախօսական ելոյթ ծաւալեց ազգային-քաղաքական գործիչ Աշոտ Սիմոնեանը, ով անդրադառնալով Մայիսեան յաղթական հերոսամարտերին՝ ինչու չէ նաեւ դրանց արդիւնքում Հայաստանի պետականութեան վերականգնման գործին, 1918 թւականի Մայիսի 28-ը համարեց՝ որպէս հայ ժողովրդի փրկութեան, վերածնդի, միասնականութեան, համազգային

հոգու յաղթանակի եւ նոր կեանքի ու ժամանակների տօնն, որի շնորհիւ վերջնականապէս փակուեցին մեր դարաւոր ստրկութեան դռները եւ սկիզբ առաւ հայկական պետականութիւնների պատմական դարաշրջանը:

Բանախօսն իր ելոյթի շարունակութեան մէջ յիշելով հայկական պետականութիւնը վերականգնող սերնդի խորհրդանիշ Արամ Մանուկեանի վճռորոշ եւ առանցքային դերակատարութիւնը՝ հայկական պետականութեան վերականգնման գործում, կոչ արեց՝ հետեւելով Արամին հաւատալ, որ լուծելու են մեր ազգային խնդիրները, որ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանը անիրականանալի երազանք չէ. պարզապէս այդ ուղղութեամբ անհրաժեշտ են հաւատ, նուիրում եւ անձնազոհութիւն:

Պրն. Սիմոնեանն իր խօսքի աւարտին ընդգծելով վերջին 27 տարիների ընթացքում Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հայրենիքում ծաւալած գործունէութիւնը՝ յաւելեց. «Նորանկախ Հայաստանում Դաշնակցութիւնն իր գործունէութիւնն սկսել է երեք նշանաբանով՝ Արցախ, արդարութիւն եւ միասնութիւն: Դաշնակցութիւնը կանգնեց հայկական 3-րդ Հանրապետութեան եւ Արցախի անկախ պետականութեան կերտման ակունքներում: Այսօր եւս Արցախը Դաշնակցութեան գերխնդիրն է ... Այն ինչ ձեռք ենք բերել եւ շարունակում ենք պահել արեամբ ու պատերազմով, չենք կարող կորցնել քաղաքական-քարոզչական եւ դիւանագիտական ճակատներում: Հիմա առաւել քան երբեւէ անհրաժեշտ է մեր միասնական լինելը, քանզի ամէն վայրկեան կարելի է պայթել փոթորիկը, ինչպէս մէկ տարի առաջ»:

Տօնի առթիւ իր հայրական պատգամը փոխանցեց թեմական առաջնորդ Հայր Սուրբը: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը նշեց, որ 99 տարիներ առաջ, երբ արդէն դաշոյնահարւում էր մեր երկրի տրոփող սիրտը՝ Երեւան մայրաքաղաքը, Աստծոյ ողորմութեամբ ու օրհնութեամբ թշնամու կողմից հայ ժողովրդի համար նախատեսւած վերջին գերեզմանը վերածուեց նոր օրօրոցի, եւ մենք կենաց ու մահու պայքարից յաղթական ու փառապանծ դուրս եկանք՝ արդիւնքում ձեռք բերելով մեր ժողովրդի փրկութիւնն ու կերտելով Հայաստանի Հանրապետութիւնը: Նա փառք տալով Աստծուն, որ այսօր վայելում ենք ազատ եւ անկախ հայրենիքը, աղօթեց Բարձրեալին՝ մեր ոտքի տակ գտնուող հայրենի հողն ու մեր գլխի վերեւ ծածանուող եռագոյն դրօշը, ոչ միայն լինեն հայ ազգի գոյատեւման վկաները, այլեւ դառնան մեզ դէպի առաւել փայլուն, պայծառ ու բարգաւաճ ապագայ առաջնորդող ուղենիշը:

Ներկաների տօնական խանդավառութիւնը կրկնապատկուեց երեկոյի գեղարուեստական բաժնում, ուր հնչեցին ազգային-յեղափոխական երգեր՝ Հայաստանից ժամանած երգիչ Աղասի Իսպիրեանի մենակատարմամբ: Երգչին կենդանի նուագակցութեամբ ընկերակցում էին Վարդան Կարապետեանն ու Արայիկ Միրզախանեանը: Աւանդոյթի համաձայն միջոցառումը եզրափակուեց հրաւառութեամբ:

ԻՐԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊԱՆԻ ԱՅՑԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ

Շաբաթ՝ թւականիս մայիսի 6-ի յետմիջօրէին, Ս. Ա. Վանք այցելեց Իրանում Ռուսաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Լեւոն Զագարեանը, իր տիկնոջ եւ հիւպատոսի տեղակալի ընկերակցութեամբ: Հիւրերին Ազգային առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում ընդունեցին թեմիս Կաթողիկոսական փոխանորդ՝ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Թեմական խորհրդի ատենապետ Վարուժ Մինասեանը եւ խորհրդի միւս անդամները:

Հանդիպման ընթացքում փոխադարձ ծանօթութիւն տեղի ունեցաւ երկու կողմերի միջեւ, այնուհետեւ հիւրերն այցելեցին Ս. Ա. Վանքի եկեղեցի եւ թանգարան:

ԽԱՉՔԱՐԻ ԲԱՑՈՒՄ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔՈՒՄ

Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ, Նոր Ջուղայի առաջին առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոսի (առաջնորդութեան ժամանակաշրջան՝ 1607-1622 թթ.) եւ Սպահանի հայոց թեմի վախճանեալ միւս առաջնորդների յիշատակին, Ս. Ամենափրկիչ վանքի շրջափակում կանգնեցուեց մի խաչքար՝ պատմական Ջուղայի խաչքարերից մէկի բնօրինակի համաձայն: Կրօնական խորհուրդն իր այս գովելի գաղափարն իրականացրեց Խուդավերդեան ընտանիքի՝ ի մասնաւորի Յարութիւն, Շողեր, Արշալոյս եւ Ծաղկուշ Խուդավերդեանների նիւթական աջակցութեամբ:

Սոյն խաչքարի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ կիրակի՝ մայիսի 14-ի երեկոյեան ժամը 7:00-ին, որտեղ որպէս բացման խօսք հանդիսավար Թովմա Գալստանեանը մասնաւորապէս անդրադարձաւ պատմական Ջուղայի խաչքարերի առանձնայատկութիւններին ու ադրբեջանական վանդալիզմի հետեւանքով այդ ձեռակերտ կոթողների ոչնչացման դառը իրողութեանը:

Բացման խօսքից յետոյ, խաչքարը ծածկող կտաւը միասնաբար վեր առեցին թեմիս կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Պատգամաւորական ժողովի, Կրօնական եւ Թեմական խորհուրդների ատենապետեր՝ Թաթուլ Օհանեանը, Վարուժ Մովսիսեանը եւ Վարուժ Մինասեանը, շրջանի Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանը եւ բարերար Արշալոյս Խուդավերդեանը, որից յետոյ նախագահութեամբ կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի եւ մասնակցութեամբ թեմիս հոգեւորականաց ու դպրաց դասերի տեղի ունեցաւ խաչքարի օրհնումը:

Շարունակութեան մէջ հանդիսատեսին ներկայացուեց խօսքերով ու գեղարուեստական կատարումներով յագեցած մի ծրագիր, ուր ելոյթների սկիզբը հանդիսացաւ Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանի խօսքը, որից մի հատուած մէջբերում ենք.

«Մեր ժողովրդի սրբագոյն եւ պատմական արժէքներից՝ Հին Ջուղայի հազարաւոր խաչքարերը զերծ չմնացին ադրբեջանական վանդալիզմից. թշնամին չհանդուրժելով դրանց սրբութիւնն ու վկայութիւնը՝ վերջնականապէս բնաջնջեց հայկական խաչքարերը, սակայն այստեղ կանգնեցուած խաչքարը վկան դարձաւ հայի աննկուն կամքի շինարար ոգու: Ժամանակը մոռացնել է տալիս ամէն ինչ, բայց այս չքնաղ խաչքարը որպէս քարէ խօսուն վկայ ապացոյց է, յիշեցնում, զգուշացնում եւ կոչ»: Պրն. Մովսիսեանն իր արտայայտութիւններն աւարտեց շնորհակալական խօսքով՝ ուղղուած այս նախագծի իրականացման գործում համագործակցութիւն ցուցաբերած հաստատութիւններին ու անհատներին:

Ընթացքում ներկաների հետ իր յոյզերն ու մտքերը կիսեց Արշալոյս Խուդավերդեանը. հիմնականում գնահատելով ծրագրի նախաձեռնողներին եւ շնորհակալութիւն յայտնելով՝ խաչքարի պատրաստման համար իր ընտանիքի նիւթական աջակցութիւնն ընդունելու առթիւ:

Շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանն իր խօսքում նշեց, որ հայ ժողովրդի նկատմամբ կիրառուած վանդալիզմի հեղինակներին անպատիժ թողնելը, տարածաշրջանում նորանոր Մշակութային ցեղասպանութիւնների իրագործման առիթ է հանդիսացել, ապա անդրադառնալով ԻԻՆԵՍԿՕ-ի նախագահութեան պաշտօնի համար իր թեկնածութիւնն առաջադրած Փուլադ Բիւլբիւլօղլիին, ով ժամանակին ղեկավարել է Նախիջեւանի հայկական խաչքարերի ոչնչացման գործողութիւնները, կոչ արեց սոյն կազմակերպութեան ողջախոհ անդամներին՝ դէմ քուէարկել յիշեալի թեկնածութեանը, ընդգծելով, որ ԻԻՆԵՍԿՕ-ի ղեկավարութիւնը ստանձնելու դէպքում, Բիւլբիւօղլինամէն գնով փորձելու է օրինականութիւն պարգեւել Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից այլ ազգերի պատմա-մշակութային արժէքների իւրացման եւ ոչնչ-

չացման գործողութիւններին եւ արգելք է հանդիսանալու տարածաշրջանում վանդալիզմի հեղինակներին պատասխանատուութեան ենթարկելու գործին:

Որպէս եզրափակիչ ելոյթ ներկաներին իր պատգամն ուղղեց գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, ով իր խօսքի սկզբնական բաժնում գնահատանքի խօսք ուղղեց Կրօնական խորհրդին եւ ծրագրի կենսագործման ուղղութեամբ համագործակցութիւն ցուցաբերած

ազգային մարմիններին ու անհատներին: Այնուհետեւ նա անդրադառնալով խաչի եւ խաչքարերի կարեւոր նշանակութեանը հայ ժողովրդի կեանքում՝ որպէս զօրութեան ու մխիթարութեան, ինչու չէ նաեւ իմաստութեան եւ մտքի լուսաւորութեան աղբիւրներ, աղօթեց առ Բարձրեալն Աստծուն, որ սոյն խաչքարի պատուանդանը խորհրդանշականօրէն հայ ժողովրդի եւ ի մասնաւորի թեմիս զաւակների համար հանդիսանայ հաւատքի եւ աննկուն կամքի պատուանդան, որին հիմնելով, ոչ միայն բարգաւաճի ու առաջադիմի մեր ազգը, այլեւ իր կորցրած կոթողների փոխարէն կերտի աւելի գեղեցիկ ու տիպար նմուշներ:

Ծրագրի ընթացքում Վանէ Օրոջեանը մեներգեց «Տուն իմ հայրենի»-ին, «Ոչ, մի նահանջէք մեր լաւ տղաներ» բանաստեղծութիւնն ասմունքեց Վանէ Յարութիւնեանը, իսկ «Յուշարձաններ» երգը կատարեց Վանանդ Իսաղուլեանը:

Հարկ ենք համարում նշել նաեւ, որ սոյն կոթողը հայաստանաբնակ քանդակագործ Արտակ Համբարձումեանի ձեռքի աշխատանքն է:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵՒ ՂԱՐՂՈՒՆ ԳԻՒՂԻ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, Համբարձման տօնի առթիւ, հինգշաբթի՝ մայիսի 25-ի առաւօտեան, ս. եւ անմահ պատարագ մատուցեց Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եւ Փերիոյ գաւառի Ղարղուն գիւղի Ս. Նշան եկեղեցիներում:

Ղարղուն գիւղի Ս. Նշան եկեղեցու ս. պատարագին նախագահեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը. օրուայ պատարագիչ հայրն էր արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, իսկ ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Ցընթացս ս. եւ անմահ պատարագի թեմական առաջնորդ Հայր Սուրբն իր յաւուր պատշաճի քարոզը տուեց ներկաներին: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն իր պատգամում անդրադառնալով Տիրոջ գործունէութեանը՝ Յարութիւնից մինչեւ Համբարձման տօները ընկած 40-օրեայ ժամանակահատուածում, կարեւորութեամբ նշեց, որ Յիսուս Քրիստոսն այդ ընթացքում շրջելով զանազան քաղաքներ ոչ միայն մեկնաբանեց Աստուածաշունչն ու Աստծոյ արքայութիւնը, այլեւ երեւալով աշակերտներին եւ հաւատացեալներին, փաստեց իր ողջ լինելը, քանի որ թշնամիները Քրիստոսի Յարութիւնը հարցականի տակ տանելու համար տարածել էին նրա դիակի գողացման սուտ լուրը: Թեմական առաջնորդն իր խօսքի շարունակութեան մէջ ընդգծելով, որ այսօր նոյնպէս մարդ արարածը շրջապատուած է նման խեղաթիւրումներով ու կեանքի ճշմարտութեան եւ Աստուածաշնչի մասին ստերով, յորդորեց՝ չհաւատալ խեղաթիւրումներին եւ ճշմարտութիւնը ամբողջութեամբ ընկալել ու հաւատքին յարութիւն տալ՝ եկեղեցի յաճախելով, Աստուածաշունչ ընթերցելով եւ յատկապէս առ բարձրեալն Աստծուն աղօթք կատարելով:

Հոգեպարար արարողութեան աւարտին հաւատացեալները հաղորդութիւն ստացան, ապա աւանդոյթի համաձայն Համբարձման տօնը նշեցին բնութեան գրկում:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ 1918 ԹՒԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կիրակի՝ մայիսի 28-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, կիրակնօրեայ ս. եւ անմահ պատարագ մատուցւեց ձեռամբ արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի եւ երգեցողութեամբ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի: Արարողութեանը նախագահեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը: Ս. պատարագին ներկայ էին նաեւ թեմիս հոգեւորականաց ու դպրաց դասերը եւ հոծ թւով ժողովուրդ:

Ընթացքում հաւատացեալներին իր յաւուր պատշաճի քարոզը փոխանցեց Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը: Նա իր խօսքում հիմնականում պատգամելով «Խնդրեցէք եւ պիտի տրուի» խօսքը, շեշտեց, որ Աստուած լաւապէս ճանաչում է մեզանից իւրաքանչիւրի պէտքերն ու երկնային արքայութիւնը ժառանգելու համար՝ զանազան խնդրանքների փոխարէն, Աստծուց, որը վստահութեան եւ գթասրտութեան Աստուած է, պէտք է խնդրենք մեր մեղքերի թողութիւնը: Քարոզիչ Հայրն աւելացրեց նաեւ, որ Աստուած կատարեց հայ ժողովրդի խնդրանքը՝ իր զաւակներին հայրենիքի ու հաւատքի պաշտպանութեան գործում ուժ պարգեւելու կապակցութեամբ, այն պատճառով, որ յարութեանն ու լոյսին հաւատացող մեր ժողովրդի գոյատեւումը նոյնպէս իր կամքն էր:

Քարոզի շարունակութեան մէջ Հայր Սուրբը շնորհաւորելով Հայաստանի Առաջին Հանրապետութեան 99-ամեակի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի անուանակոչութեան տօների առիթներով՝ կոչ արեց բոլորին՝ աղօթել Աստծուն՝ հայրենիքը պայծառացնելու եւ հայ զինուորին, հոգեւորականին ու ազգային գործիչներին ուժ եւ առողջութիւն պարգեւելու համար:

Հոգեպարար արարողութեանը յաջորդեց հոգեհանգստեան պաշտօնը՝ ի յիշատակ մայիսեան յաղթանակների՝ Բաշ-Ապարանի, Սարդարապատի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերում նահատակած հայորդիների:

Այնուհետեւ բոլորը համախմբւելով եկեղեցու բակում՝ վայելեցին այս պանծալի առիթին նւիրուած գողտրիկ միջոցառումը, որտեղ թեմիս Կրօնական խորհրդի գեղեցիկ մտայղացմամբ, մայիսեան հերոսամարտերի, ինչու չէ նաեւ Խոռամշահրի ազատագրման պանծալի յաղթանակների առթիւ, պարգեւատրւեցին մայիսի 21-ից 29-ը ընկած ժամանակահատւածում ծնւած թեմիս զաւակները: Պարգեւատրման արարողութիւնը կայացաւ ձեռամբ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի, թեմիս Պատգամաւորական ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանի, Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանի եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանի:

Տօնական այս միջոցառման ընթացքում, որը վարեց Մանիա Ղուկասեանը, թեմիս ազգային իշխանութեան անունից արտայայտւեց Պատգամաւորական ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանը, ով գնահատելով գեղեցիկ մտայղացումը՝ մայիսի 21-ից 29-ը ընկած ժամանակահատւածում ծնւած թեմիս զաւակներին մեծարելը՝ աւելացրեց, որ այս յիշարժան թւականներին ծնւածները խորհրդանշականօրէն մայիսեան յաղթանակների ճամբին զոհւած մարտիկների կենդանի վկաներն են: Նա իր խօսքի շարունակութեան մէջ ընդգծելով, թէ մայիսեան հերոսամարտերով երաշխաւորւեց հայ ժողովրդի եւ հայրենիքի գոյատեւումը, մաղթեց՝ նոյն ոգով ինչքան շուտ կերտել նաեւ Միացեալ Հայաստանը:

Որպէս եզրափակիչ խօսք իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմական առաջնորդը: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը շնորհաւորելով ՀՀ հիմնադրման 99-

ամեակի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի անւանակոչութեան տօների, ինչու չէ նաեւ Խոռամշահրի ազատագրման առիթները՝ կարեւորութեամբ շեշտեց, որ հայ ժողովուրդը ոչ միայն կապուած է իր հայրենիքին եւ պատրաստ է յանուն այդ սուրբ հողի զոհաբերելու իր թանկագին կեանքը, այլեւ Սփիւռքում ապրող մեր ժողովուրդը նոյն գիտակցութեամբ պատրաստ է նաեւ պաշտպանելու իր ծննդավայր երկրի հողային ամբողջականութիւնը, հայ համայնքն ու եկեղեցին:

Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ բախտաւորութիւն համարելով հայ ծնուելը, կրկնակի բախտաւորութիւն համարեց յատկապէս յաղթանակների ամսայ ընթացքում՝ մայիսում ծնուելը: Նա վերջում դրատանքի խօսք ուղղեց թեմիս Կրօնական խորհրդին՝ ծրագիրը նախաձեռնելու, իսկ Ն. Ջ. Հայոց Առաքելական եկեղեցեաց վարչութեանն ու եկեղեցու Կանանց յանձնախմբին՝ միջոցառման կազմակերպման գործում համագործակցութիւն ցուցաբերելու համար:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԿՈՒՍԱՆԱՑ ՎԱՆՔՈՒՄ ՆՇՒԵՑ՝ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ԵՒ Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆՑ ԿՈՅՍԵՐԻ ՏՕՆԸ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԻՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ ԿԱՏԱՐՒԵՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ

Ս. Հռիփսիմեանց եւ Ս. Գայիանեանց կուսանաց տօնի առթիւ, երկուշաբթի՝ յունիսի 12-ի առաւօտեան, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, ս. եւ անմահ պատարագ մատուցեց Նոր Ջուղայի Ս. Կատարինեան Կուսանաց վանքի եկեղեցում՝ միեւնոյն ժամանակ նշելով նաեւ նոյն եկեղեցու անւանակոչութեան տօնը: Օրուայ պատարագիչ հայրն էր՝ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը: Արարողութեանը մասնակցում էին թեմիս քահանայից ու դպրաց դասերը, իսկ ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Յընթացս հոգեպարար արարողութեան, ներկայ հաւատացեալներին իր քարոզն ուղղեց պատարագիչ Հայր Սուրբը: Նա անդրադառնալով Ս. Հռիփսիմեանց եւ Գայիանեանց կոյսերի կեանքին ու նահատակութեանը, ինչու չէ նաեւ այն փաստին, որ նրանք իրենց թանկագին կեանքը զոհաբերեցին յանուն իրենց Քրիստոնէական ամուր հաւատքի, շեշտեց, որ այսօրուայ պայմաններում այլեւս չկան Դիոկղետիանոս կայսրեր ու Տրդատ թագաւորներ՝ հաւատքում իրենց կամքը մեզ պարտադրելու համար. այսօր միայն պարտադրող մի բան կայ եւ դա Քրիստոսի անունով միմեանց սիրելն ու յարգելն է, որը մեզ պատգամեցին յատկապէս Հռիփսիմեանց եւ Գայիանեանց կոյսերը:

Հայր Սուրբն իր քարոզի մի այլ բաժնում շեշտելով, որ նշուած կոյսերի հաւատքի եւ սիրոյ օրինակը մինչեւ այսօր, լոյսի պէս մեր ժողովրդին առաջնորդում է դէպի հաւատքի, սիրոյ, յոյսի եւ կամքի ճանապարհ՝ դէպի Յիսուս Քրիստոս եւ Աստուած, շնորհաւորանքի խօսք ուղղեց Նոր Ջուղայի Կուսանաց վանքի անւանակոչութեան տօնի եւ Ն. Ջ. Հայուհեաց Բարեգործական ընկերութեան հիմնադրման 125-ամեակի առիթներով:

Ս. պատարագի աւարտին թեմական առաջնորդ Հայր Սուրբը հոգեւորականց դասի հետ կատարեց Ջրօրհնէքի արարողութիւնը՝ Ս. Կատարինէ կոյսի աջով, իսկ Ն. Ջ. Հայուհեաց Բարեգործական ընկերութեան հիմնադրման 125-ամեակի առթիւ, հոգեհանգստեան պաշտօն տեղի ունեցաւ Կուսանաց վանքի կոյսերի եւ նոյն ընկերութեան հիմնադիրների ու ննջեցեալների վառ յիշատակին:

Այնուհետեւ վանքի բակում՝ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան հաւաքատեղիին կից բացօթեայ տարածքում, նոյն ընկերութեան նախաձեռնութեամբ իրականացուեց գողտրիկ միջոցառում՝ վարչութեան անդամ Մարօ Սէթ-Աղայեանի հաղորդավարութեամբ: Սկզբում հաղորդավարն ակնարկ ունեցաւ յատկապէս 125-ամեայ ընկերութեան հիմնադրմանն ու նպատակներին, ապա ասմունքեցին Քարմէն Եարիջանեանը եւ միութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամուհի Վանէ Շահնազարեանը, իսկ երգի մենակատարմամբ հանդէս եկաւ Արաքս Տէր-Մարտիրոսեանը:

Վերջում իր հայրական խօսքը փոխանցեց թեմական առաջնորդը:

Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն նախ շնորհաւորանքի խօսք ուղղելով յոբելեար ընկերութեան 125-ամեակի առթիւ, ինչու չէ նաեւ գնահատելով օրուայ արարողութեան ու միջոցառման կազմակերպիչներին, կարեւորութեամբ շեշտեց, որ վերջերս վերանորոգուած Կուսանաց վանքն առաւել պայծառանալու է ոչ միայն Նոր Ջուղայի Հայոց Առաքելական եկեղեցեաց Վարչութեան եւ Բարեգործական ընկերութեան աշխատանքների շնորհիւ, այլեւ այստեղ կազմակերպող արարողութիւններին ու միջոցառումներին թեմիս զաւակների մասնակցութեամբ:

Նա իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ քիչ առաջ իրականացուած հոգեհանգստեան կարգի ընթացքում յիշեցին թէ բարերարները եւ թէ յանուն եկեղեցու, ազգի ու ժողովրդի անձնուիրաբար ծառայութիւն մատուցած անհատները, աղօթեց առ Աստուած, որ նման անձնաւորութիւնների ներկայութիւնը միշտ անպակաս լինի թեմում:

Արարողութիւններին ու յոբելեանական միջոցառմանը ներկայ էին թեմիս ազգային մարմինների ներկայացուցիչները եւ հոծ թւով ժողովուրդ:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԻՑ ՏՕՆԸ ՆՇՒԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ բազմաչարչար հայրապետի վիրապից դուրս բերելու տօնի առթիւ, շաբաթ՝ յունիսի 17-ի երեկոյեան ժամը 5:30-ին, Նոր Ջուղայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, որի անուանակոչութեան տօնն էր միաժամանակ, սուրբ եւ անմահ պատարագ մատուցեց՝ ձեռամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի: Արարողութեանը ներկայ էին հոգեւորականաց ու դպրաց դասերը եւ համայնքի հաւատաւոր ժողովուրդը. ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Ցընթացս ս. պատարագի, յաւուր պատշաճի քարոզեց առաջնորդ Հայր Սուրբը, ով անդրադառնալով Ս. Գրգիոր Լուսաւորչի կեանքին՝ հիմնականում ընդգծեց Խոր Վիրապում սրբի 13 տարիների կրած չարչարանքները եւ այնտեղից դուրս բերուելուց յետոյ նրա գործունէութիւնը՝ աղօթքներով հայոց Տրդատ թագաւորին եւ արքունիքին ախտերից ու հոգեկան տագնապներից բուժելու եւ քրիստոնէական հաւատքը տարածելու ուղղութեամբ: Նա իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքի տարբեր հանգրուանների յաջորդականութիւնը ապացուցում է, թէ բոլոր իրադարձութիւնները տեղի են ունենում աստուածային տնօրինութեամբ, յորդորեց՝ այս տօնը պատեհ առիթ համարելով, կեանքում արժանաւոր եւ կենտրոնական տեղ յատկացնել աստուածային հեռանկարին, որոշումներին ու նպատակակէտերին:

Յաջորդիւ տեղի ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի աջով ջրօրհնէքի արարողութիւնը՝ պատարագիչ Հայր Սուրբի ձեռամբ եւ հոգեւորականաց ու դպրաց դասերի մասնակցութեամբ:

Ս. Պատարագի աւարտին, եկեղեցու շրջափակում, հոգեզմայլ շարականների ներքոյ, տեղի ունեցաւ աւանդական թափօրի արարողութիւնը, ուր հաւատացեալ ժողովուրդը մօտենալով գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանին, համբուրեցին նրա ձեռքում գտնուող Գրիգոր Լուսաւորչի աջը՝ սրբի եւ Աստծու օրհնութիւնն ստանալու համար:

Սոյն տօնի առթիւ հայոց առաջին հայրապետի աջմասունքով թափօրի կազմելը, վերջին տարիներին հաստատուել է Սպահանի հայոց թեմում՝ Անթիլիասի Կաթողիկոսարանի Մայր Տաճարում իրականացուող նմանօրինակ հինաւուրց աւանդութեան համաձայն, ինչը մեծ հաւատք ու ընդունելութիւն է գտել թեմիս ժողովրդի մօտ:

Եկեղեցական արարողութեանը յաջորդեց ընդունելութիւնը եւ գեղարուեստական յայտագրով ծրագիրը: Սոյն բաժինը հանդիսավարեց Անուշ Յովհաննիսեանը, աղօթքների ընթերցմամբ եւ գեղարուեստական կատարումներով ելոյթ ունեցան Հրաչիկ Ղազարեանը, Սարգիս սրկ. Երանը, Վեհանուշ Խուդաբախշեանը եւ Արաքս Տէր-Մարտիրոսեանը, իսկ եկեղեցին բարեզարդ պահելու համար՝ գնահատեցին Ն. Զ. Հայոց Առաքելական եկեղեցեաց վարչութիւնը, պատկան Տիկնանց յանձնախումբն ու երէցփոխներ՝ Արաքս Տէր-Մարտիրոսեանը եւ Ռուբէն Մկրտչեանը: Վերջում նոյնպէս շնորհակալական եւ գնահատանքի խօսքեր հնչեցին եկեղեցու ծխատէր քահանայ հայր արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի ու գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի կողմից:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 22-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Կիրակի՝ յունիսի 25-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ եւ արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի ձեռամբ մատուցած կիրակնօրեայ ս. եւ անմահ պատարագի ընթացքում, Հայրապետական մաղթանք տեղի ունեցաւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ արժանաւոր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի ընտրութեան եւ օծման 22-ամեակի առթիւ:

Ցընթացս ս. պատարագի հաւատացեալներին օրւան պատշաճ իր քարոզը փոխանցեց թեմական առաջնորդ Հայր Սուրբը: Նա անդրադառնալով Հայրապետական մաղթանք արարողութեանը՝ յատկապէս նշեց, որ աւետարանական հատուածներից, աղօթքներից եւ շարականներից կազմուած այս արարողութիւնը՝ խաղաղութեան աղերսանք է առաքուած առ Աստուած: Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ ընդգծելով անցնող 22 տարիների ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի նուիրեալ ծառայութիւնը՝ մասնաւորապէս շեշտեց այն բեղուն գործունէութիւնը, որը Վեհափառն իրագործել է Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցու առաւել պայծառացման եւ սփիւռքն ու սփիւռքահայութիւնը հովւելու ուղղութեամբ:

Քարոզիչ Հայրն աւելացրեց, որ մենք որպէս շնորհազարդ Հայրապետի հովանաւորութիւնը վայելող ժողովուրդ, պարտականութիւն ունենք նրա նկատմամբ մեր երախտագիտութիւնը դրսեւորել՝ աղօթքների միջոցով եւ միմեանց աղօթակիցը դառնալով, խնդրել երկնաւոր Հօրը՝ օրհնի մեր եկեղեցին ու մեր ժողովուրդը եւ անսասան պահի մեր կաթողիկոսութիւնը՝ ի մասնաւորի նրա գլուխը կանգնած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետին՝ նրան շնորհելով քաջառողջութիւն, յաջողութիւն եւ յատկապէս առաւել բեղուն գործունէութիւն:

Արարողութեանը ներկայ էին Ճահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, հոգեւորականաց ու դպրաց դասերը եւ հաւատացեալ ժողովուրդ: Երգեցողութիւնը կատարեց Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՍՊԱՀԱՆԻ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԺՈՐԺԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

10-րդ գումարման Իսլամական խորհրդարանի աշխատանքային շրջանի մեկնարկից շուրջ մէկ տարի անց, սոյն խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, նշուած նստաշրջանի ընտրութիւններից յետոյ իր առաջին ժողովրդական հանդիպումն ունեցաւ Նոր Ջուղայի հայ համայնքի հետ, ուրբաթ՝ մայիսի 12-ի երեկոյեան, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում:

Հանդիպումը կազմուած էր երկու բաժիններից: Նախ Ժորժիկ Աբրահամեանը զեկոյցով հանդէս եկաւ անցնող ժամանակաշրջանում խորհրդարանական ընդհանուր աշխատանքների շուրջ, ապա անդրադառնալով իր գործունէութեանը, յատկապէս ընդգծեց պատկան յանձնաժողովի շրջագծում իրականացրած աշխատանքները եւ համընդհանուր խնդիրների կապակցութեամբ՝ փոքրամասնութիւնների պատգամաւորների հետ իրանահայ զոյգ պատգամաւորների համագործակցութիւնը: Ճարունակութեան մէջ պատգամաւորն տեղեկութիւններ փոխանցեց նաեւ Նոր Ջուղայում իր գրասենեակի աշխատանքներից՝ մասնաւորապէս նշելով՝ ստացած դիմումների բնոյթը եւ դրանց ընթացք տալու եղանակները:

Միջոցառման երկրորդ բաժնում ներկաներն իրենց յուզող հարցերի պատասխաններն ստացան պատգամաւորից:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները: Երեկոն վարեց Գեղարդ Մանսուրեանը:

ԻՐԱՆԻ ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՍՊԱՀԱՆԻ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԺՈՐԺԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շաբաթ՝ 2017 թ. մայիսի 13-ի երեկոյեան ժամը 7-ին, Իրանի Իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը խորհրդարանի 10-րդ նստաշրջանի պատգամաւոր ընտրուելուց յետոյ, իր առաջին ժողովրդական հանդիպումն ունեցաւ Շահինշահրի հայ համայնքի հետ՝ «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում:

Կազմակերպուած հանդիպմանը ներկայ էին համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները, Հայ համայնքի վարչութիւնը, միութիւնների ներկայացուցիչները, ուսուցիչները եւ համայնքի անդամները:

Հանդիպման առաջին բաժնում յարգելի պատգամաւորը համապարփակ զեկոյց ներկայացրեց խորհրդարանում՝ ի մասնաւորի պատկան յանձնաժողովում իր կենսագործած գործունէութեան շուրջ եւ իր զեկոյցում ընդգծեց նաեւ միւս փոքրամասնութիւնների պատգամաւորների հետ համագործակցաբար ծաւալած աշխատանքների մասին եւ իր գոհունակութիւնը յայտնեց յատկապէս դոկտ. Կարէն Խանլարեանի ցուցաբերած համագործակցութեան առթիւ:

Պրն. Աբրահամեանը նաեւ տեղեկութիւններ փոխանցեց ստացած դիմումների բնոյթի եւ դրանց բարեյաջող ընթացք տալու կապակցութեամբ:

Այնուհետեւ առիթ ընձեռուեց ներկաներին իրենց յուզող հարցերի եւ խնդիրների վերաբերեալ արտայայտուելու, որի ընթացքում պրն. Աբրահամեանը օգտակար եւ գոհացուցիչ խորհուրդներ եւ ցուցումներ տուեց ներկաներին:

Երեկոն վարեց պրն. Արիս Դաւթեանը:

ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ԿԱՅԱՑԱՒ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԵՒ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԱԲՇԽՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ՝ մայիսի 12-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, կայացաւ «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների 2015-2016 եւ 2016-2017թ.թ. ուսումնական տարեշրջանների շրջանաւարտ աշակերտ-ուհիների վկայականաբաշխման հանդիսաւոր արարողութիւնը:

Երեկոյին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ազգային մարմինների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ, զոյգ դպրոցների անձնակազմն ու շրջանաւարտների հարազատները:

Ծրագիրը բաղկացած էր երկու բաժիններից. առաջին բաժինը, որն ամբողջութեամբ յագեցած էր աշակերտական գեղարուեստական անզուգական ելոյթներով, հաճելի երկխօսութիւններով հանդիսավարեցին Վանէ Յարութիւնեանը, Վանանդ Իսաղուլեանն ու Անգիհէ Կարապետեանը: Այս բաժնում «Եռաձայն պատարագ»-ից մի հատուած ասմունքեց Արփա Մարգարեանը. նշելի է, որ Արփան 2015 թւականին, Հայաստանի 7-րդ համահայկական օլիմպիադայի շրջագծում ներկայացրեց նոյն հատուածը, ինչի համար էլ արժանացաւ գնահատագրի:

«Ոչ, մի նահանջէք» բանաստեղծութիւնը ասմունքեց Վանէ Յարութիւնեանը, իսկ Թանգիկ Զարդն-Դաւուդի եւ Լիլիան Ասատրեանի կիթառի նուագակցութեամբ «Վերջին զանգ»-ը ասմունքեցին Վանէ Ղազարեանը, Լիլիթ Հայրապետեանն ու Քրիստին Նազարեանը. Լիլիթ Հայրապետեանը ասմունքեց նաեւ «Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում» բանաստեղծութիւնը՝ Գէորգ Մովսիսեանի կիթառի ընկերակցութեամբ:

Սելին Խոջեմալը եւ Նիհել Օրոջեանը դաշնամուրով առանձնաբար նուագեցին դասական երաժշտութիւններ, Վանանդ Իսաղուլեանը, Թադէ Մկրտչեանն ու Արայիկ Սիմոնեանը կատարեցին «Արժանի» երգը, Մարալ Քեշիշեանը «Մի կաթիլ մեղրը»-ն արտասանեց ռեփ ոճով, իսկ Արփիար Դաւթեանն ու Թադէ Յակոբեանը հանդիսավարների հետ ունեցած հետաքրքիր զրոյցի ներքոյ, բոլորին խրախուսեցին զբաղուել մարզանքով՝ յիշեցնելով՝ «Առողջ հոգին առողջ մարմնի մէջ է» ասացուածքը:

Ծրագրի երկրորդ բաժինը վարեց դպրոցի գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը, որտեղ նախ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ եւ միեւնոյն ժամանակ սոյն դպրոցների ուսուցիչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը ելոյթ ունեցաւ պատկան տնօրինութիւնների եւ ուսուցչական կազմերի անունից:

Հայր Սուրբն ընդգծելով, որ ուսուցչին՝ ուսուցիչ եւ դպրոցին՝ դպրոց դարձնողը աշակերտն է, երախտագիտութեան խօսք ուղղեց ծնողներին՝ իրենց զաւակների դաստիարակութեան եւ ուսման պատասխանատու գործը ազգային վարժարաններին վստահելու համար: Նա նշելով, որ զոյգ դպրոցների ուսուցչական կազմերը ջերմեռանդ աշխատանք են կատարել յատկապէս աշակերտների հոգում ու մտքում սէր, յարգանք, հայրենասիրութիւն եւ միասնականութիւն սերմանելու ուղղութեամբ, իր համոզումը յայտնեց, որ կատարած այդ աշխատանքների արդիւնքը շուտով արտացոլուելու է աշակերտների յաջողութիւններում:

Հայր Սուրբն իր խօսքի աւարտին շրջանաւարտներին յորդորեց՝ հրայատուկ նայուածքով ընկալել աշխարհը, լինել յաջող ու ստեղծագործ եւ հաւատարմօրէն ծառայել սեփական ժողովրդին:

Հայր Սուրբի խօսքից յետոյ բեմ հրաւիրուեցին շրջանաւարտները՝ աւարտական հանդերձանքով զգեստաւորուած: Նրանք խմբովի կատարեցին «Ազգ իմ փառապանծ» եւ «Դպրոցի ճամբան» երգերը, ապա հանդիսատեսի հետ միասնաբար ականջալուր եղան Կրթական խորհրդի խօսքին, որն ընթերցեց սոյն խորհրդի ներկայացուցիչ Սաթօ Աւետումեանը:

Նա շեշտելով, որ մաշտոցեան գիրն ու գրականութիւնը առ այսօր սերնդէ սերունդ փոխանցուել է հայկական վարժարանի եւ հայ ուսուցչի շնորհիւ, կարեւորութեամբ ընդգծեց, թէ ընտանիքը, դպրոցն ու միջավայրը այն երեք գործօններն են, որոնք ձեւաւորում են երիտասարդի նկարագիրը:

Տկն. Աւետումեանն իր խօսքում արդիւնաւէտ գնահատելով զոյգ դպրոցների տնօրինութիւնների եւ անձնակազմերի կատարած աշխատանքները՝ շրջանաւարտներին կոչ արեց՝ իրենց մասնագիտութիւնը ծառայեցնել հայ ժողովրդին եւ հաւատարիմ մնալ հայ ազգի արժէքներին ու սկզբունքներին:

Այնուհետեւ աւանդոյթ դարձած երդման կարգը՝ Սիլվա Կապուտիկեանի բառերով, արտասանեցին Նորվան Մարկոսեանը եւ Վերգինէ Համբարձումեանը, որին միացաւ խումբը «Երդւում եմ»-ի բացագանչումով: Երեկոն համեմուեց «Քանանեան»-ի նախկին տարիների շրջանաւարտ Վանա Շիրւանեանի երգի կատարմամբ եւ խորհրդանշական կարկանդակի մուտքով:

Շարունակութեան մէջ տեղի ունեցաւ վկայականների բաշխման արարողութիւնը, ձեռամբ՝ գերպ. Հայր Սուրբերի, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ զոյգ դպրոցների տնօրինութիւնների ու պատկան ուսուցիչների:

Միջոցառման եզրափակիչ ելոյթը հանդիսացաւ կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի պատգամը: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը գնահատանքի խօսք ուղղելով ազգային իշխանութեանն ու դպրոցի պատասխանատուներին եւ յատկապէս առիթը շնորհաւորելով աշակերտներին ու նրանց

ծնողներին, նշեց, թէ կրթութեան գնացքն իր երթը շարունակում է եւ այսօրուայ աւարտականի հանդիսութեամբ այն կանգ չի առնելու: Նա շրջանաւարտներին յորդորեց՝ կեանքում առաջնորդուել դպրոցում ստացած կրթութիւնից ու դաստիարակութիւնից բխող իմաստութեամբ, հեռու մնալ «Մի կաթիլ մեղրը» հեքիաթի հետեւանքներն ունեցող երեւոյթներից եւ հաւատարիմ մնալով ազգին ու դպրոցին՝ իրենց ձիրքը եւ շնորհքը նպաստ բերել նրանց:

Վերջում շրջանաւարտները կատարեցին գլխարկների վեր նետման աւանդական կարգը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿՈՎ ԱՒԱՐՏԻԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Նոր Ջուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի ամավերջի հանդիսաւոր ձեռնարկը տեղի ունեցաւ ուրբաթ՝ յունիսի 2-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում, ներկայութեամբ՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, Կրթական խորհրդի ներկայացուցիչների եւ դպրոցի աշակերտութեան ծնողների ու հարազատների:

Բացման խօսքով հանդէս եկաւ դպրոցի տնօրինուհի Քառոլին Դիլանչեանը: Նա նշելով, թէ երեխաները հրաշք են իրենց պարզութեամբ ու անմեղութեամբ, կարեւորութեամբ ընդգծեց՝ հարկաւոր է վարուել այնպէս, որ մանուկների մօտ երբեք չխամրի լաւատեսութեան եւ աշխարհը գեղեցիկ ընկալելու ունակութիւնները: Տկն. Դիլանչեանը յատկապէս շեշտելով, որ երեխաները իւրաքանչիւր օր պէտք է արժանանան մեր գուրգուրանքին ու խնամքին, յունիսի 1-ը՝ մանուկների իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրը, պատեհ առիթ համարեց՝ կեանքի այս բողբոջների նկատմամբ մեր բացթողումների եւ ապագայ անելիքների մասին առաւել խորհելու համար:

Երեկոյի գեղարուեստական բաժինը կազմուել էր երեք արարներից: Ծրագրի առաջին բաժնում տիկնիկներին ու խաղալիքներին նուիրուած մանկական գեղեցիկ երգերով ու արտասանութիւններով ելոյթ ունեցան կրտսերները՝ Վարդագոյն խմբակի սաները, ովքեր իրենց տիկնիկներն ամուր գրկած ներկաների խանդավառ տրամադրութիւնը բազմապատկեցին նաեւ երգերը համեմող շարժումներով: Երկրորդ արարն իրականացուեց մանկապարտէզի աւագ դասարանի Դեղին խմբակի աշակերտների միջոցով, որտեղ հանդիսատեսին հայկական շունչ ու հոգի հաղորդուեց՝ մանկական ժողովրդական ու հայրենասիրական երգերի խմբական կատարումներով ու մեներգերով: Մի խօսքով ծրագրի այս հատուածը մի փոքրիկ Հայաստան էր՝ իր հարազատ բուրմունքով ու կանչով: Եզրափակիչ հանգրուանում իրագործուեցին նախակրթարանի սաների կատարումները, ուր նրանք նաւաստիների կերպար ընդունած փնտրում էին իրենց նաւակի անունը: Երգերով ու երկխօսութիւններով ողողուած այս ներկայացման աւարտին նաւաստիներին օգնութեան հասան ծովաստղերը՝ հանելուկների միջոցով նրանց յուշելով իրենց նաւի անունը՝ «Այբբենարան»-ը: Նախակրթարանի ծրագիրն աւարտուեց աւանդոյթ դարձած «Հրաժեշտ այբբենարանին» երգով ու շրջանաւարտների միջոցով աւարտական գլխարկների վեր նետումով:

Խանդավառ եւ աշխոյժ կատարումներին յաջորդեց թեմական առաջնորդ Հայր Սուրբի հայրական պատգամը: Նա սկզբում մասնաւորապէս անդրադառնալով իւրաքանչիւր արարին՝ գնահատեց բոլոր ելոյթները եւ դպրոցի պատասխանատուների կատարած աշխատանքը՝ ծրագրի իրականացման ուղղութեամբ, ապա շեշտելով, որ այսօրուայ մատաղ սերունդը համայնքի վաղուայ ղեկավարն է դառնալու, կարեւորութեամբ ընդգծեց՝ եթէ թեմի ազգային իշխանութիւնը, դպրոցի տնօրինութիւնն ու ուսուցչական կազմը, ինչու չէ նաեւ ծնողները միասնաբար հոգածութիւն ցուցաբերեն այս բալիկների նկատմամբ, նրանք ապագայում հայ ազգի լաւագոյն նաւաստիները դառնալով՝ համայնքի եւ հայրենիքի նաւը կուղղորդեն դէպի պայծառ ապագայ: Վերջում թեմական առաջնորդն առաւել իմաստութիւն եւ յաջողութիւն մաղթեց Կրթական խորհրդին ու դպրոցների պատասխանատուներին՝ նոր սերնդի այս ծաղիկներին լաւագոյն գուրգուրանքի արժանացնելու համար:

Այնուհետեւ ձեռամբ գերպ. Հայր Սուրբի, Կրթական

խորհրդի ատենապետուհի Մարգարիտ Դաւթեանի, դպրոցի տնօրինուհու եւ պատկան ուսուցչուհիների, առանձնաբար տեղի ունեցաւ մանկապարտէզ-նախակրթարանի սաների վկայագրերի բաշխման արարողութիւնը:

Վերջում կից սրահում ներկաներն այցելեցին աշակերտների անհատական եւ խմբական ձեռքի աշխատանքներից կազմուած ցուցահանդէս:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՑՈՅԹ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ «ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԵՐ» ԹԵՄԱՅՈՎ

Թւականիս մայիսի 14-ին, իրականութիւն դարձաւ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի գեղեցիկ մտայղացումը, առ այն, որ Նոր Ջուղայի առաջին առաջնորդ Մեսրոպ Արքեպիսկոպոսի եւ թեմի միւս առաջնորդների յիշատակին, Ս. Ա. վանքի շրջափակում կանգնեցնել մի խաչքար՝ պատմական Ջուղայի խաչքարերից մէկի բնօրինակի համաձայն: Խորհուրդն այս բարեբաստիկ առիթով, ինչու չէ նաեւ մատաղ սերնդին հայկական մշակոյթին՝ ի մասնաւորի խաչքարերին առաւել ծանօթացնելու նպատակով, այս անգամ ձեռնամուխ եղաւ համագործակցաբար հայոց ազգ. «Քանանեան» աղջկանց ու «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների տնօրինութիւնների եւ ուսուցչական կազմերի կազմակերպել աշակերտական գիտելիքների մրցոյթ, որը տեղի ունեցաւ երկուշաբթի՝ յունիսի 19-ի երեկոյեան ժամը 6:30-ին, հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում՝ «Հայկական խաչքարեր» խորագրով:

Մրցոյթին ներկայ էին՝ Կրօնական, Թեմական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչները, հայոց ազգ. դպրոցների տնօրինութիւններն ու ուսուցչական կազմերը եւ աշակերտների ծնողները:

Սկզբում ողջոյնի խօսքով հանդէս եկաւ հաղորդավարուհի Լեռնիկ Ծատուրեանը, ով իր դիպուկ ու հաճելի արտայայտութիւններով մեծ խանդավառութիւն առաջացրեց մրցակիցների եւ հանդիսատեսի միջեւ:

Իրաւարար կազմի դժուարին պարտականութիւնը ստանձնել էին՝ Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ եւ «Կատարինեան» դպրոցի ուսուցիչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, «Քանանեան» դպրոցի փոխ-տնօրէն Ռիմա Սիմոնեանը եւ ուսուցչուհիներ՝ Սեդա Դիլանչեանը, Կարին Տէր-Մարտիրոսեանն ու Սիւնէ Մինասեանը:

60 աշակերտ-ուհիները բաժանուել էին 12 խմբերի միջեւ: Առաջին փուլի ընթացքում բոլոր խմբերը պատասխանեցին իրենց հերթական, ինչու չէ նաեւ ցուցադրուած մի տեսանիւթի շրջագծում հնչեցուած հարցերին: Արդիւնքների ամփոփումից յետոյ, եզրափակիչ փուլ թեւակոխեց բարձրագոյն նիշը հաւաքած «Հայկ» խումբը, իսկ եզրափակչի երկրորդ մասնակցին ճանաչելու ուղղութեամբ՝ քանի որ «Նայիրի» եւ «Ուրարտու» խմբերը համահաւասար նիշերով, միասին զբաղեցրել էին երկրորդ լաւագոյն տեղը, նրանց համար հնչեց լրացուցիչ մէկ հարց, եւ ի վերջոյ «Նայիրի»-ին յաջողուեց մրցակցութիւնը շարունակել եզրափակչում:

Վերջին փուլի ընթացքում առաւել թէժ մրցակցութիւն տեղի ունեցաւ երկու մասնակից խմբերի միջեւ, որի արդիւնքում առաջին տեղը գրաւեց «Նայիրի»-ին, իսկ երկրորդ հանիսացաւ «Հայկ»-ը:

Յաջորդիւ կազմակերպիչներին ուղղուած շնորհակալական խօսքով հանդէս եկաւ Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանը, յատկապէս գնահատելով նրանց, առ այն, որ աւարտական քննութիւններից անմիջապէս յետոյ աշակերտներին խրախուսել են մասնակցելու այս մրցոյթին: Պրն. Մովսիսեանն իր խօսքի աւարտին խորհրդի անունից գնահատագրեր

շնորհեց իրաւարար կազմի անդամներին եւ զոյգ դպրոցի փոխ-տնօրէններ Ռիմա Սիմոնեանին ու Ռուբէն Խաչիկ-Գրիգորեանին: Պարգեւատրեցին մրցոյթի առաջին եւ 2-րդ կարգը զբաղեցրած խմբերը, իսկ գնահատագրեր շնորհեցին բոլոր մասնակիցներին:

Երեկոն եզրափակեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի խօսքով, ով գնահատեց նման թեմայով մրցոյթի կազմակերպումը, յատկապէս ընդգծելով, որ այն պատեհ առիթ հանդիսացաւ, որպէսզի աշակերտութիւնն ընդլայնի իր տեղեկութիւնները հայկական խաչքարերի մասին:

Միջոցառումն արժանացաւ նաեւ հանդիսատեսի ու ծնողների բարձր գնահատանքին:

«ԱՐՄԷՆ» ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՀՐԱԺԵՇՏ ՏԻԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ 6-ԱՄԵԱՅ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Նոր Ջուղայի «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի վեցերորդ դասարանի աշակերտ-ուհիների աւարտական ձեռնարկը տեղի ունեցաւ չորեքշաբթի՝ յունիսի 21-ի երեկոյեան, հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում, նուիրուած լինելով հայոց բանակի կազմաւորման 25-ամեակին: Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ազգային մարմինների եւ դպրոցների ներկայացուցիչներ, ծնողներ ու հարազատներ:

Երեկոյի բացումը կատարուեց ուսուցչուհի Միգանուշ Տէր-Մարտիրոսեանի ողջոյնի խօսքով, որից յետոյ արտայայտուեց Կրթական խորհրդի փոխ-ատենապետ Սաթօ Աւետումեանը:

Տկն. Աւետումեանն շնորհաւորանքի խօսք ուղղելով շրջանաւարտներին ու ծնողներին եւ գնահատելով «Արմէն» դպրոցի պատասխանատուների կատարած ջանադիր աշխատանքը, նշեց՝ թեմի ազգային իշխանութիւնը յստակ քաղաքականութիւն եւ ծրագիր է մշակել դպրոցների կրթական ոլորտի ժամանակակից զարգացման ուղղութեամբ:

Նա իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով տարրական դպրոցների հիմնական նպատակներին, որոնցից են՝ աշակերտների հոգեմտաւոր եւ ֆիզիքական կարողութիւնների զարգացումը եւ միջնակարգ դպրոցում ուսումը շարունակելու համար անհրաժեշտ կրթամակարդակի ապահովումը, ընդգծեց, թէ հայկական վարժարաններում աշակերտութիւնը հայեցի դաստիարակութեան շրջագծում ծանօթանում են յատկապէս ազգային եւ քրիստոնէական արժէքներին: Տկն. Աւետումեանն իր խօսքի աւարտին շրջանաւարտներին յորդորեց՝ աշխատել ջանասիրաբար եւ լինել յաջողակ ու առաջնակարգ նախասիրած աշխատանքներում:

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ «Արմէն» կրթահամալիրի տնօրէն Վրէժ Շիրանեանը, ով իր խօսքում շեշտելով, որ աշակերտութեան թի նուազման պատճառով, անհրաժեշտ է հայոց դպրոցների համար ունենալ հեռանկարային ամբողջական ծրագիր եւ որդեգրել ազդու գործելաոճ, կարեւորութեամբ ընդգծեց, թէ ազգային վարժարաններում կրթած ու դաստիարակուած սերունդներում գոյութիւն ունեն այնպիսի անհատներ, որոնց գործունէութիւնն ու դերակատարութիւնը տարածուել են հայրենիքի ու Սփիւռքի տարբեր համայնքների կրթամշակութային կեանքում, ինչու չէ նաեւ հայ ժողովրդի պահանջատիրութեան հետապնդման աշխատանքներում: Տնօրէնն իր խօսքի աւարտին աշակերտներին յորդորելով, որ իրենց գիտելիքներն ու դաստիարակութիւնն անմնացորդ ծառայեցնել՝ ի խնդիր հայ ժողովրդի ու հայրենիքի երջանկութեան ու բարօրութեան, շնորհակալական խօսքեր ուղղեց՝ ազգային իշխանութեանը, դպրոցի անձնակազմին, երեկոյի կազմակերպիչներին եւ ծնողական խորհրդին:

Խօսքին յաջորդեց գեղարուեստական յայտագրով ծրագիրը՝ շրջանաւարտ աշակերտների կատարմամբ: Այս բաժնում, որն իրականացուեց Սիսիան Մարկոսեանի ու Արիւն Դիլանչեանի հաղորդավարութեամբ, հնչեցին «Հայոց դպրոց», «Հայոց լեզու», «Ոչ չեն մեռնում հերոսները», «Ջան հայրենիք», «Քայլիր միշտ առաջ»

եւ «ՆԺդեհիկների քայլերգը» խմբերգերը, Էմմանուէլ Ասատրեանը դաշնամուրով նուագեց «Քոչարի» երաժշտութիւնը, իսկ խմբական կատարմամբ իրականացուեց «Մարտական պար» պարային համարը՝ աւարտին ծածանելով Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի սրբազան դրօշները:

Գեղարուեստական ելոյթներն ընդմիջուեցին պաստառի վրայ ցուցադրուող լուսանկարներով, ուր արտացոլուած էր շրջանաւարտների 6-ամեայ ուսումնական տարիները:

Յաջորդիւ աւարտական զգեստներով դարձեալ բեմ ներկայացան աշակերտները: Ծրագրի այս հանգրուանում Վիվիանա Միրզայեանի եւ Արգին Մկրտչեանի միջոցով հնչեցին երդման կարգի յուզիչ տողերը, ապա գեղարուեստական բաժինը եզրափակուեց «Վերջին զանգ» եւ«Հրաժեշտ «Արմէն» դպրոցին» երգերի խմբական կատարմամբ, իսկ Անի Մինասեանի դաշնամուրի նուագակցութեամբ Թենի Զարդն Դաւուդն ու Հանրի Հաթամեանը ասմունքեցին «Վերջին զանգը» բանաստեղծութիւնը: Այս բաժինը հաղորդավարեց Էմմանուէլ Մարկոսեանը:

Վկայականների եւ գնահատագրերի բաշխման բաժնում ձեռամբ թեմակալ առաջնորդ Հայր Սուրբի, ազգային մարմինների ներկայացուցիչների, դպրոցի տնօրինութեան՝ Լիոնթին Աբրահամեանի ու Վրէժ Ճիրանեանի եւ հայերէն ու պարսկերէն առարկաներ դասաւանդող ուսուցիչների շրջանաւարտներին յանձնուեցին իրենց վկայականները, իսկ գերազանցիկներին՝ գնահատագրեր:

Ապա Սպահան քաղաքի 3-րդ շրջանի կրթադաստիարակչութեան հիմնարկի գնահատագրերը շնորհուեցին սոյն հիմնարկի կողմից կազմակերպուած միջոցառումներում եւ մրցոյթներում յաջողութիւն արձանագրած աշակերտներին: Այս շրջագծում գնահատագրեր յանձնուեցին նաեւ ուսուցչուհի Արսինէ Դաւթեանին՝ նշուած հիմնարկի կողմից օրինակելի ուսուցիչ ճանաչելու, իսկ դպրոցի տնօրինութեանը՝ բարեգործական նպատակներով կամզակերպուած դաշտահանդէսի ամբողջ հասոյթը համապատասխան կենտրոնի նուիրելու առթիւ: Հարկ է նշել, որ դպրոցի տնօրինութեանը յանձնուեց նաեւ ՀՀ սփիւռքի նախարարութեան գնահատագիրը՝ «Իմ քաղցր լեզու» համահայկական աշակերտական մրցոյթին ակտիւ մասնակցութիւն ցուցաբերելու համար: Այս բաժնին զուգընթաց հանդիսատեսին ներկայացուեց աշակերտական յաջողութիւններից զեկոյց:

Երեկոյի եզրափակիչ ելոյթով հանդէս եկաւ թեմակալ առաջնորդը, ով իր խօսքում գնահատելով օրուայ պատգամներն ու աշակերտական ելոյթները, գնահատեց նաեւ դպրոցի անձնակազմի ու ծնողական խորհրդի կատարած աշխատանքները: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը շնորհաւորանքի խօսք ուղղեց շրջանաւարտներին ու զանազան ոլորտներում յաջողութիւն արձանագրած աշակերտներին, ապա անդրադառնալով երեկոյի ընթացքում հնչած «Ոչ չեն մեռնում հերոսները» երգին, վստահութիւն յայտնեց, որ այս շրջանաւարտները նոյնպէս ընդունակ են ապագայում իրականացնել զանազան հերոսութիւններ, եթէ նրանց նկատմամբ չպակասեն քաջալերանքն ու շարունակական հսկողութիւնը:

Վերջում ոգեշնչած ու խանդավառուած աշակերտուհիներն աւարտական գլխարկների վեր նետմամբ, հրաժեշտ տուեցին իրենց դպրոցական կեանքի այս հանգրուանին:

Ձեռնարկի կազմակերպիչ խմբի անդամներն էին՝ ուսուցչուհի Ժանետ Բաղումեանը, երգուսոյց Արսինէ Մարգարեանը եւ պարուսոյց Ալինէ Յարութիւնեանը՝ գլխաւորութեամբ ուսուցչուհի Միգանուշ Տէր-Մարտիրոսեանի:

«ԵՐԳԽՕՍՈՒԹԻՒՆ» ԽՈՐԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ՝ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ

12 տարիներ է, ինչ Նոր Զուղայի եւ զանազան այլ բեմերից իր անզուգական կատարումներով հանդիսատեսին հիացնում է Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի կրտսեր բաժանմունքը: Սկզբում խումբը կոչուեց մանկա-պատանեկան երգչախումբ, սակայն տարիներ յետոյ, անդամների հասակ առնելուն հետ, այն վերածուեց երիտասարդականի: Երգչախումբն իր կազմաւորման տարիներից մինչեւ այսօր, Արմէն Ամիրխանեանի գեղարուեստական ղեկավարութեամբ, իր հերթական համերգներին զուգահեռ կազմակերպել է բարեսիրական բնոյթ կրող երգահանդէսներ, ինչու չէ նաեւ իր ելոյթներով մասնակցել՝ Իրանում եւ արտերկրում իրականացուած մի շարք միջոցառումներին ու փառատօներին:

Երգչախմբի «Երգխօսութիւն» խորագիրը կրող համերգը տեղի ունեցաւ հինգշաբթի՝ յունիսի 22-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում, ուր որպէս հանդիսատես, երիտասարդ, բայց միեւնոյն ժամանակ արհեստավարժ խմբի ելոյթներն ունկնդրեցին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ազգային մարմինների, Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների եւ հայոց դպրոցների ներկայացուցիչները, նոյն երգչախմբի աւագ անդամները եւ ժողովուրդ:

Երեկոն առաւել պայծառացաւ հանդիսավար Կարին Տէր-Մարտիրոսեանի պերճախօսութեամբ ու պատշաճ բացատրութիւններով:

Համերգային կատարումներն սկիզբ առան հայկական քաղցրահունչ մեղեդիներով: Այս բաժնում խումբը կատարեց հանրայայտ հայ կոմպոզիտորների գլուխգործոց ստեղծագործութիւններից չորս երգեր, որոնք էին՝ «Տէր կեցոյ դու զհայս»-ը, «Քելէր, ցոլէր»-ը, «Ապարանը քարոտա, անձրեւ եկաւ»-ը, «Հով արէք»-ը:

Այնուհետեւ հանդիսատեսին յիշողութեան գիրկը նետեց, խմբի սոլօների կատարումները՝ «Բիթելզ»-ի, Մարեա Քերիի, Շառլ Ազնաւուրի, «Սքորփիոնզ»-ի եւ մի շարք այլ երգիչների ու խմբերի համաշխարհային հիթերից մի փունջ ներկայացնելով: Այս շրջագծում Թանգիկ Միրզախանեանը երգեց «Derniere dance»-ը, Մարինէ Մկրտչեանը՝ «La Spagnola»-ը, Թենի Մկրտչեանը՝ «Besame mucho»-ը, Թադէ Մկրտչեանը՝ «Dance with me to the end of love»-ը, Թանիա Մինասեանը՝ «Simply falling», Վանա Շիրւանեանը՝ «Looking in»-ը, իսկ Հարմա Կարապետեանը՝ «La boheme»-ը:

Նշելի է նաեւ, որ վերջերս երգչախմբի անդամներից կազմուել է վոկալ-գործիքային անսամբլ, որը ծրագրում հանդէս եկաւ իր առաջին բեմային ելոյթով: Խմբի կենդանի նւագակցութեամբ «Wind of change» երգը կատարեց Վահան Վարդեւանեանը, իսկ «Let it be»-ն՝ Դաւիթ Թորոսեանը: Սոյն անսամբլի միւս անդամներն են՝ Հարմա Կարապետեանը, Թանգիկ Միրզախանեանը, Մարինէ Մկրտչեանը եւ Արայիկ Սիմոնեանը:

Համերգային ելոյթները եզրափակուեցին «Let my people go» եւ «Դու պիտի ապրես իմ Հայաստան» երգերի խմբական կատարումներով: Վերջին երգը հնչում էր առաջին անգամուայ համար:

Նշել է, որ ծրագրի ընթացքում կատարողներն ու հանդիսատեսը պատասխանելով հանդիսավարի «Ի՞նչ է ձեզ տուել «Կոմիտաս»-ը» եւ «Այսօր ի՞նչն է ձեզ բերել այս սրահ» երկու հարցերին, միւսների հետ կիսեցին այն յոյզերն ու անմոռանալի տպաւորութիւնները, որոնք իրենց մէջ առաջացել են երկար տարիների ընթացքում՝ «Կոմիտաս»-ի հետ կեանք ապրելով:

Վերջում ներկաներին իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմակալ առաջնորդ Հայր Սուրբը: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն իր խօսքի առաջին բաժնում՝ պատասխանելով երեկոյի հարցերին, ասաց, որ առաջին անգամն է, ինչ ներկայանում է երգչախմբի ձեռնարկին եւ իրեն այս սրահ է բերել խմբի մակարդակի մասին իր մէջ ունեցած հետաքրքրութիւնը, սակայն այս ձեռնարկից յետոյ երիտասարդ կոմիտասցիների համերգներին ներկայանալու է միայն նրանց նորանոր յաջողութիւնների ականատեսը լինելու համար: Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ գնահատելով ղեկավարի աշխատանքն ու անդամների կատարումները, նշեց, որ այս երիտասարդներն իրենց յաջող ելոյթներով, ոչ միայն հանդիսատեսին ստիպեցին կտրելով դրսի աշխարհից, իր ամբողջ ուշադրութիւնը սեւեռել համերգի շուրջ, այլեւ գերազանցեցին այլուր գտնուող իրենց բոլոր մրցակիցներին:

ՋԻՒԱՆ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԲՆԱԿԻՉԸ» ՖԻԼՄԸ ՑՈՒՑԱԴՐՒԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Շուշիի ազատագրման 25-ամեակի առիթով, Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի նախաձեռնութեամբ, չորեքշաբթի՝ մայիսի 10-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, ցուցադրուեց կինոռեժիսոր Ջիւան Աւետիսեանի «Վերջին բնակիչը» գեղարուեստական ֆիլմը:

Սկզբում կազմակերպիչ յանձնախմբի անունից բացման խօսքով հանդէս եկաւ Վեհանուշ Խուդաբախշեանը՝ հիմնականում տեղեկութիւններ փոխանցելով ֆիլմի բովանդակութեան եւ ռեժիսորի գործունէութեան շուրջ: Այնուհետեւ արտայայտուեց նաեւ կինոռեժիսոր Ջիւան Աւետիսեանը, ով անդրադառնալով ֆիլմի պատմութեանը, կարեւորութեամբ ընդգծեց, թէ փորձել է համամարդկային արժէքների ֆոնի ներքոյ ներկայացնել Արցախեան ազատամարտը:

Խօսքերին յաջորդեց «Վերջին բնակիչը» ֆիլմի ցուցադրումը, որն արժանացաւ հանդիսատեսի բարձր գնահատանքին:

Երեկոյին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների եւ հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչներն ու ժողովուրդ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՄԲ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՆՇՒԵՑ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 25-ԱՄԵԱԿԸ

Նախաձեռնութեամբ շրջանի Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի, հինգշաբթի՝ մայիսի 11-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան շրջափակում, կայացաւ Արցախ աշխարհի հինաւուրց բերդաքաղաք Շուշիի ազատագրման փառապանծ առիթի 25-ամեակին նուիրուած ժողովրդական տօնախմբութիւնը՝ Նոր Ջուղայի եւ Շահինշահիի հայ համայնքների անդամների մասնակցութեամբ:

Երեկոն բացուած յայտարարուեց հանդիսավար Վեհանուշ Խուդաբախշեանի ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքերով, այնուհետեւ ընթացքում նոյն հանդիսավարի միջոցով հնչեցին պանծալի յաղթանակին առնչուող ոգեշնչող խօսքեր ու տեղեկութիւններ, ցուցադրուեցին տեսանիւթեր, իսկ հայրենասիրական երգերի մենակատարումով հանդէս եկան տաղանդաշատ մեներգիչներ՝ Էդուին Մանուկեանը, Թանիա Մինասեանը, Վանա Շիրուանեանն ու Անի Ղազարեանը:

Յատկանշական է, որ այս շրջագծում իրենց աշխոյժ դերակատարութիւնը ցուցաբերեցին Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան եւ Հ.Յ.Դ. «Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութիւնները՝ իրենց յատկացուած առանձին կրպակներում: Կանանց Գթութեան միութեան միջոցով ցուցադրուել եւ վաճառքի էին հանուել Արցախից բերուած յուշանուէրներ, իսկ «Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութեան նախաձեռնութեամբ, մանուկներին նուիրում էին հայոց եռագոյնը խորհրդանշող փուչիկներ, խորհրդանշական պատկերներ էին դաճուում նրանց դէմքերին, համապատասխան սկաւառակների տրամադրումով հակիրճ տեղեկութիւններ էին փոխանցուում Արցախի տեսարժան վայրերի կապակցութեամբ եւ Հայոց Ցեղասպանութեան մասին պատմող «Խոստումը» ֆիլմի վարկանիշը բարձրացնելու նպատակով՝ արձանագրում էին ֆիլմի օգտին քուէները IMDB կայքէջում: Պատանեկան միութեան անդամները

հանդէս եկան նաեւ հայկական շուրջպարի կատարմամբ, որին միացաւ ժողովուրդը:

Ծրագրում Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ եւ Արցախի ազգային վիճակախաղի վերջին երկու շրջանների տոմսերի վաճառման գործը թեմիս սահմաններում կազմակերպող յանձնախմբերի պատասխանատուներ՝ Ադիկ Ղեւեանի, Իւետ Բալեանի եւ Ռաֆֆի Մկրտչեանի միջոցով, նախորդ շրջանի (4-րդ շրջան) վիճակախաղի թեմիս երկու յաղթողներին շնորհեցին իրենց նւէրները:

Տօնախմբութեանը մասնակցել էին նաեւ Ճահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ու ազգային մարմինների ներկայացուցիչները:

ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՄՐՑԱՇԱՐ՝ ՆԻՒՐՒԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 102-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակի ոգեկոչման յանձնախմբի եւ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Մարզական միաւորի համատեղ նախաձեռնութեամբ, թւականիս մայիսի 3-ից 5-ը միութեան մարզասրահում կայացաւ բասկետբոլի մրցաշար՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակին, որին հրաւիրուել եւ մասնակցութիւն էին բերել Սպահան նահանգի լաւագոյն խմբերից 3-ը:

Մրցաշարի բացման ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, ազգային մարմինների եւ Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները, միութեան արտօնատէրերը, միութենականներ եւ հայ ու պարսիկ մարզասէր հասարակութիւնը: Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակի նշման յանձնախմբի եւ միութեան Մարզական միաւորի անունից ներկաներին ողջունեց Ռուբէն Խաչիկ Գրիգորին, ով ուրախութիւն յայտնեց մրցաշարի կազմակերպման կապակցութեամբ եւ պարսկերէն լեզուով հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց Հայոց Ցեղասպանութեան իրողութեան մասին, նշելով. «Եթէ մարդու իրաւունքները պաշտպանող

պետութիւնները հետեւէին Իրանի իսլ. պետութեան

օրինակին եւ դրական քայլեր վերցնէին մարդկութեան դէմ ոճրագործութիւնները կանխելու համար, ներկայ քաղաքակիրթ աշխարհը ականատեսը չէր լինի իրականացուած յետագայ ոճրագործութիւններին»: Այնուհետեւ հրաւիրեց թեմի կաթողիկոսական փոխանորդին, որպէս խաղերի պաշտօնական բացում գնդակը դաշտ նետելու, որից յետոյ տողանցեցին Սպահան, Շահինշահիր եւ Շահռեզա քաղաքների «Սփադանա», «Թոնդար», «Փայա-ռեզին» եւ հիւրընկալ՝ Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան բասկետբոլի հաւաքականները:

Երեք օր տեւողութեամբ ընկերական մրցաշարը աւարտուեց Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակի խորհրդանշի պատկերով պատրաստուած յուշանուէրների ու գնահատագրերի բաշխմամբ, որոնք յանձնեցին միութեան արտօնատէրը, Կենտրոնական եւ Մարզական միաւորի վարչութիւնների ու Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակի ոգեկոչման յանձնախմբի ներկայացուցիչները:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՒՋԱՆ ԳԻՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՍԱՀԻ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՒԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ. Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՆԻՒՐԱՏՈՒԹԵԱՄԲ

Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութիւնն իր հայրենանուէր աշխատանքների ծիրում, իր նիւթական օժանդակութեամբ, ֆինանսաւորեց Հայաստանի Արագածոտնի մարզի Ուջան գիւղի Զօրավար Անդրանիկի անուան միջնակարգ դպրոցի մարզասրահի հանդերձարանի ու սանհանգոյցի վերանորոգման աշխատանքը՝ նպատակ ունենալով իր նպաստը բերելու հայրենիքի գիւղերի դպրոցների մարզական հնարաւորութիւնների մակարդակի բարձրացման գործին:

Շինարարական աշխատանքն իրականացուել է ՀՕՄ-ի (Հայ Օգնութեան միութիւն) Հայաստանի Շրջանային վարչութեան միջոցով:

Սոյն մարզասրահում մարզւում են շուրջ 40 երեխաներ՝ ազատ ոճի ըմբշամարտ մարզաձեւում:

Ողջունելով այս գովելի քայլը, առաւել բեղմնաւոր գործունէութիւն ենք մաղթում «Արարատ» միութեանը՝ իր հայրենանպաստ եւ միութենական աշխատանքներում:

Ն. Զ. ՀԱՅՈՒՀԵԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՆՇԻԵՑ ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Տարիներ է, ինչ ապրիլի 7-ը՝ Մայրութեան եւ գեղեցկութեան տօնը Նոր Ջուղայում նշւում է, Ն. Զ. Հայուհեաց բարեգործական ընկերութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած ձեռնարկների միջոցով:

Սոյն աւանդոյթն իրականացուեց եւս այս տարի եւ ապրիլի 7-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ դասախօսական-գեղարուեստական յայտագրով ծրագիր՝ նուիրուած զոհողութեան ու նուիրումի խորհրդանիշ էակներին՝ հայ մայրերին, եւ քանի որ այս տարի լրանում է Հայուհեաց բարեգործական ընկերութեան հիմնադրման 125-ամեակը, այս տօնակատարութիւնը լաւագոյն սկիզբը հանդիսացաւ միութեան 125-ամեակի յոբելեանական ձեռնարկների շարանի:

Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, քահանայ հայրերը, թեմի ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի հայոց ազգային դպրոցների ու միութիւնների ներկայացուցիչները, Բարեգործական ընկերութեան անդամուհիները եւ հոծ բազմութիւն:

Երեկոն բացուած յայտարարուեց կազմակերպիչ ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի միջոցով՝ մօրը ձօնուած բանաստեղծութեան կատարմամբ, ապա բացման խօսքով հանդէս եկաւ Վեհանուշ Խուդաբախշեանը, որտեղ ասուած էր. «Մայրերի մասին գրւել եւ գրւում են բազմաթիւ երգեր ու բանաստեղծութիւններ. որքան շատ են գրւում, միեւնոյնն է չեն սպառւում մօրը գովերգող խօսքերը: Ինչքան էլ մօրդ գովերգես՝ աշխարհի լաւագոյն եւ հրաշալի խօսքերով ու բառերով, դարձեալ երբ նայում ես այդ սուրբ էակին, ծնւում են նոր բառեր ու խօսքեր»:

Օրուայ բանախօսն էր վաստակաւոր ուսուցչուհի Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը, ով իր խօսքի սկզբնական բաժնում անդրադառնալով Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ թագաւորի պատմութեանը, ինչու չէ նաեւ նոյն ժամանակահատուածում Տրդատի միջոցով հաւատի համար զոհուած Գայիանէ եւ Հռիփսիմէ կոյսերին, շեշտեց, որ քրիստոնէական հաւատը ազնւացնում է հայ կնոջը եւ օգնում կերտել աւելի ամրակուռ ընտանիք: Նա հայոց պատմութեան մէջ յաւերժացած քրիստոնէակենցաղ կանանց բաժանելով հետեւեալ երեք խմբերի՝ քրիստոնէութեան նահատակներ եւ վկայուհիներ, Կրօնաւորներ կամ միանձնուհիներ եւ բարեպաշտ քրիստոնեաներ, առանձնաբար յիշեց նրանցից մի քանիսին՝ Վահան Մամիկոնեանի մայր Զուիկ տիկնոջը, Արշակ 2-րդ թագաւորի կին Փառանձեմ թագուհուն, Սերոբ Աղբիւրի կին Սօսէ մայրիկին, ինքնապաշտպանական կռիւներում դերակատար կանանց, Ցեղասպանութեան ճիրաններից փրկւած որբերի խնամատարութեամբ զբաղւող Սաթենիկ եւ Պերճուհի Պարտիզպաններին եւ յատկապէս Արցախեան պատերազմում դերակատար հերոսուհիներին՝ շեշտելով, որ հայ կինը հանդէս է գալիս իր բազմակողմանի բնաւորութեան գծերով, որպէս հաւատին կառչած անձ, մայրենի լեզուն պահպանող ազդակ, հայրենիքի պահպանման ճամբին մղւող պայքարի ջատագով, հերոսածին եւ տոկունութեան ու զոհողութեան տիպար:

Տկն. Տէր-Մարտիրոսեանն իր խօսքի երկրորդ բաժնում թւարկելով 125-ամեայ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան գործունէութեան բնագաւառները, ինչպիսիք են՝ բարեսիրական նպատակներով աշխատանքները եւ կրթութեան, մշակութային եւ Հայ Դատի ոլորտներում կատարած գործունէութիւնը, դրւատանքի խօսք ուղղեց միութեան վեհանձն ու խոհեմ անդամուհիներին, ապա կոչ ուղղեց բոլոր մայրերին՝ նեցուկ հանդիսանալ նոր սերնդի հայեցի դաստիարակութեան, հայկական բազմադարեան մշակոյթի պահպանման եւ ազատ անկախ ու միացեալ հայրենիքի կերտման նւիրական գործերին:

Յաջորդիւ գեղարւեստական անզուգական համարների կատարմամբ բազմապատկւեց ներկաների տօնական տրամադրութիւնը: Մեներգերի բաժնում հանդէս եկան՝ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի անդամներ՝ Էդուիկ Մանուկեանը «Հայոց աղջիկներ» եւ Նարբէ Գրիգորեանը «Լուսին ես ամպի տակին» երգերով, Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախմբի անդամուհի Արսինէ Ալեքսանդրեանը երգեց «Օրօր»-ը, իսկ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը՝ «Մայր իմ սուրբ»-ը: «Սարերի հովին մեռնեմ» եւ «Ախպերս ու ես» երգերը կատարեց «Ասուպ» ռոկային խումբը՝ անդամակցութեամբ՝ Ադրիան Դաւթեանի, Վահէ Կարապետեանի եւ Դրօ ու Սերօ Տէր-Մարտիրոսեանների: «Փարոս» ասմունքի խմբի անդամուհիների միջոցով հնչեցին եւս երկու բանաստեղծութիւններ. սոյն խմբի կատարողներն էին՝ Վեհանուշ Խուդաբախշեանը, Վանա Զոհրաբեանը, Նարեգա Սիմոնեանը, Մեղրի Կարապետեանը, Վանիա Պետրոսեանը եւ Վանէ Ճահնազարեանը: «Արցախի պար» պարային համարով հանդէս եկաւ Փերիոյ Կրթ. միութեան «Էրեբունի» պարախումբը, իսկ «Զով գիշեր» մենապարը կատարեց նոյն պարախմբի անդամուհի Ալինէ Յարութիւնեանը:

Հարկ է նշել, որ «Էրեբունի» պարախումբը ղեկավարում էր Ալինա Գրիգորեանը, «Փարոս» ասմունքի խումբը՝ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, իսկ երգչախմբերի անդամների ելոյթի իրականացման ուղղութեամբ համագործակցութիւն էին ցուցաբերել պատկան ղեկավարները՝ «Կոմիտաս»-ից Արմէն Ամիրխանեանը, իսկ «Տաթեւ»-ից Համիկ Ալեքսանդրեանը:

Գեղարւեստական բաժնի հաղորդավարութիւնը կատարեց Վանիա Պետրոսեանը, ով ընթացքում ընթերցեց նաեւ առիթին նւիրւած գեղեցիկ խօսքեր ու մաղթանքներ:

Վերջում ներկաներին իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմիս Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբը: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը նախ շնորհաւորանքի խօսք ուղղեց Մայրութեան տօնի եւ Հայուհեաց բարեգործական ընկերութեան հիմնադրման 125-ամեակի առիթներով, ապա իր խօսքում նշելով, որ հայրական ձեռքը կառուցում է տունը, իսկ մայրական ձեռքը՝ կանգուն ու շէն է պահում այն, ցանկացաւ, որ բոլորն այս տօնական երեկոյին համբուրեն իրենց կեանք տւող մայրերի ձեռքերը, իսկ իւրայատուկ

աղօթք բարձրացնեն առ Աստուած իրենց զոյգ ծնողների՝ հայրերի ու մայրերի համար: Նա իր խօսքի աւարտին հայ մօրը նմանեցնելով հրեշտակի՝ ընդգծեց, թէ ովքեր տեսել են հայ մայրերին, կարող են ասել՝ տեսել են նաեւ հրեշտակներին:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ՝ ՆԻՒՐՒԱԾ ԶԱՒԱԽՔԻՆ ԵՒ ԶԱՒԱԽՔԱՀԱՅՈՒԹԵԱՆԸ

16 տարիներ է, ինչ Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Կենտ. վարչութեան հետ համագործակցաբար, կազմակերպում է Զաւախքին նուիրուած իր բարեգործական դաշտահանդէսը: Ամենամեայ այս միջոցառման հասոյթը յատկացուում է շրջանի Հայ Դատի յանձնախմբի կողմից ստեղծուած Զաւախքի հիմնադրամին, որի գումարներից մինչեւ այսօր մի շարք շինարարական եւ վերանորոգման աշխատանքներ են իրականացուել Զաւախքի տարբեր շրջաններում:

Սոյն բարեգործական դաշտահանդէսն այս տարի իրականացուեց ուրբաթ՝ յունիսի 30-ի երեկոյեան, «Արարատ» միութեան շրջափակում, ուր ժողովուրդն առիթ ունեցաւ վայելելու անակնկալներով լի խանդավառ մթնոլորտը՝ իր բազմատեսակ եւ զւարճալի խաղերով, մրցոյթներով, անուշաբոյր ուտեստներով, ինչու չէ նաեւ հնչող գեղեցիկ երաժշտութեամբ:

Հարկ է նշել, որ կազմակերպիչների գեղեցիկ մտայղացմամբ, այս տարի պատանիների համար տեղի ունեցաւ նաեւ գիտելիքների մրցոյթ, որի արդիւնքում լաւագոյնը ճանաչուեց ու գնահատուեց Արթուր Քամարզարեանը:

ԱՇԽԱՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՏՕՆԻԵՑ Ն. Ջ. ՀԱՅ Մ. Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂՈՒՄ

Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Երէցական միաւորի նախաձեռնութեամբ, «Սրբոց Վարդանանց» դպրոցի փոքր սրահում, թւականիս մայիսի 5-ի ժամը 19:00-ին, կազմակերպուել էր դաշտահանդէս՝

աշխատաւորութեան տօնի առիթով: Սրահը զարդարուած էր օրուան համապատասխան շնորհաւորական պաստառով: Սրահում հնչում էր հայկական երաժշտութիւն:

Երէցական միաւորի նախագահ՝ Լինա Մովսիսեանը վարչութեան անունից ներկաներին բարի գալուստ մաղթելով, շնորհաւորեց բոլոր աշխատաւորներին տօնի առիթով, ցանկացաւ առողջութիւն, յաջողութիւններ աշխատանքում ու անձնական կեանքում:

Երէցական միաւորը կազմակերպել էր խաղ-մրցութիւններ, իսկ յաղթողների համար՝ նուէրներ: Հաճելի երեկոյ անցկացնելով եւ իրենց հետ տանելով անմոռանալի յուշեր, ներկաները շնորհակալութիւն յայտնեցին եւ ժամը 22:00-ին հրաժեշտ տուեցին կազմակերպիչներին:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Երեքշաբթի՝ 2017 թւականի մայիսի 16-ի երեկոյեան, Շահինշահրի Հայոց Ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի սրահում տեղի ունեցաւ դպրոցի սաների ամավերջի հանդէսը՝ ներկայութեամբ Սպահանի թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի, Տ. Սահակ քհնյ. Մինասեանի, Պատգամաւորական ժողովի, Թեմական, Կրթական, համայնքի վարչութեան ներկայացուցիչների, սաների ծնողների եւ հարազատների: Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ դպրոցի տեսչուհի օրդ. Կարինէ Մինասքանեանը, ով ամփոփ զեկոյց ներկայացրեց դպրոցի աշխատանքների մասին եւ դպրոցի

անձնակազմի անունից շնորհակալութիւն յայտնեց Ազգային իշխանութեանը՝ իր ցուցաբերած անվերապահ հովանաւորութեան առթիւ, նաեւ Ծնողական խորհրդին, տիկնանց Արմինէ Թահմազեանին, Մարիա Խաչատրեանին եւ Արսինէ Պօղոսեանին՝ ուսումնական տարեայ ընթացքում իրենց համագործակցութեան համար, ինչպէս նաեւ ձեռնարկի իրագործմանը աջակցող պրնյք. Լէօ Շիրւանեանին, Գեւիկ եւ Անդրէ Խաչատրեաններին եւ թղթակից Վիոլետ Յարութիւնեանին:

Այնուհետեւ գեղեցկօրէն զարդարուած բեմում ներկայացան սաները՝ իրենց քաղցր ու խանդավառ արտասանութիւններով ու երգերով, ովքեր արժանացան ներկաների բուռն ծափողջոյններին:

Ծրագրի յաջորդ բաժնում տեղի ունեցաւ 2016-2017 ուս. տարեշրջանի վկայականների բաշխումը՝ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ եւ Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ու Կրթական խորհրդի ներկայացուցիչների ներկայութեամբ:

Ծրագրի աւարտին օրհնանքի եւ գնահատանքի իր խօսքը փոխանցեց գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը՝ շեշտադրելով հայ կրթօջախի ուրոյն դերը՝ մատաղ սերնդի հայեցի դաստիարակութեան նուիրական գործում: Նա բարձր գնահատելով դպրոցի անձնակազմի եւ պատասխանատուների իրագործած աշխատանքը եւ դրսեւորած հոգատարութիւնն ու յանձնառութիւնը՝ մաղթեց նրանց առաւել ոյժ, կորով ու քաջառողջութիւն:

Օրուայ առիթով կազմակերպւել էր նաեւ համեստ հիւրասիրութիւն:

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 99-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

2017 թւականի յունիսի 1-ի երեկոյեան, Շահինշահիր Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում, հանդիսաւոր արարողութեամբ նշուեց Հայաստանի Առաջին Հանրապետութեան 99-ամեակը:

Միջոցառմանը ներկայ էին Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, հոգեւորականաց դասը, ազգային իշխանութեան, ազգային մարմինների ներկայացուցիչներն ու մեծ թիւով ժողովուրդ:

Ծրագիրն սկզբնաւորուեց Հայաստանի Առաջին Հանրապետութեան 99-ամեակի տօնակատարութեան յանձնախմբի անդամ Մարիա Խուդաւերդեանի ողջոյնի խօսքով, ով բարի գալուստ մաղթելով ներկաներին ներկայացրեց օրուայ ձեռնարկի յայտագիրը:

Որպէս օրուայ խորհրդի սկիզբ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն՝ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահիրի մասնաճիւղի Սկաուտական միաւորի միջոցով եւ հնչեց Հայաստանի Հանրապետութեան հիմնը, որից յետոյ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ եւ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ու հոգեւորականաց դասի մասնակցութեամբ կատարուեց Հանրապետական մաղթանք:

Յաջորդիւ օրուայ առթիւ բանախօսեց վաստակաշատ ուսուցչուհի Վիոլետ Յարութիւնեանը, ով հայոց տօնացոյցում մայիս ամիսը որակելով որպէս յաղթանակների ամիս՝ ամփոփ անդրադարձաւ Հայաստանի անկախութեան հիմնաքարը հանդիսացող Մայիսեան հերոսամարտերին, որոնցով կարելի է ասել փակւեց հայ ժողովրդի ողբերգական պատմութեան շրջանը եւ սկսւեց նորագոյն՝ հայկական պետականութիւնների պատմութեան ժամանակաշրջանը: Այդ հրաշալի յաղթական էջերից է համարւում 9 մայիս 1992-ը՝ Շուշիի ազատագրման թւականը, երբ երկար ժամանակներից ի վեր գերութիւնից ազատագրւեց կովկասահայութեան մշակութային մեծ կենտրոններից մէկը՝ Շուշին:

Տօնի առթիւ իր հայրական պատգամը փոխանցեց թեմական առաջնորդ Հայր Սուրբը: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը շնորհաւորելով համազգային մեծ տօն՝ 1918 թւականի մայիսի 28-ը՝ բարձր գնահատեց հայ ժողովրդի անկոտրում կամքն ու ազատատենչ ոգին, ընդգծելով հայ ժողովրդի յաղթանակի գերագոյն գաղտնիքը, որն է միասնականութիւնը, որի շնորհիւ հայ ժողովուրդը միշտ կենաց ու մահու պայքարում հրաշքներ է գործել եւ հպարտութեամբ յաղթական է դուրս եկել:

Ծրագրի երկրորդ բաժնում հնչեցին ազգային-ժողովրդական գեղեցիկ երգեր՝ Նոր Ջուղայից հրաւիրուած շնորհալի երիտասարդ Վահէ Յարութիւնեանի գործիքաւորմամբ, եւ ներկաները համախմբուած՝ գեղեցիկ երաժշտութեան ներքոյ մեր հայկական աւանդական շուրջպարը պարեցին:

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Զ. Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութիւն

Զանազան նուիրատուութիւններ

-2,000,000 դրամ. Վարդան եւ Կարինէ Մկրտչեաններ

-500,000 դրամ. Արեւիկ Սահակեան՝ Յովսէփ եւ Վարդուհի Սահակեանների յիշատակին

Ս. Գէորգ եկեղեցի

-10,000,000 դրամ. Մարալ Խաչիկեան՝ Նազիկ Մանուկեանի յիշատակին

-1,500, 000-ական դրամ. Հենրիկ եւ Թենի եւ Էմելի Յարութիւնեաններ, Ոմն

-1,100,000 դրամ. Սաջադ Էթեմադի

-800,000 դրամ. Մասումի

-500,000-ական դրամ. Սիրան Ալումեան, Գայիանէ Գէորգեան, Յովիկ Թորոսեան, Նիլուֆար Զահանի

-300,000 դրամ. Ոմն

-100,000 դրամ. Վաչէ Շահիջանեան

Խաչի զոյգելու համար

-100,000-ական դրամ. Այլին Թորոսեան

Ս. Յովհաննու եկեղեցի

-1,000,000 դրամ. Մանիժէ Բաբափուռ

-500,000-ական դրամ. Վիգէն Մարգարեան, Մառիթա Կարապետեան

Ս. Ստեփանոս եկեղեցի

-100,000 դրամ. Նվարդ Վարդանեան

Հանգուցեալ Էլինա Շիրանեան-Ղարիբեանի յիշատակին

-1,500,000 դրամ. Աստղիկ եւ Վահիկ եւ Վանիկ Մարկոսեաններ

-1,200,000 դրամ. Մարտիկ Բաղրամեան

-1,000,000-ական դրամ. Անդրանիկ Շիրանեան, Վահիկ Թորոսեան

-700,000-ական դրամ. Վրէժ Շիրանեան, Մելքոմ Շիրանեան

-500,000-ական դրամ. Տիգրանուհի Մանսուրեան, Հրայր Ղարիբեան, Անուշ Ղարիբեան, Ռազմիկ եւ Արփի եւ Սիրվարդ Թորոսեաններ, Տիգրանուհի Ղարիբեան, Ռազմիկ եւ Արփի Թորոսեաններ,

-300,000-ական դրամ. Վահիկ Այլազեան, Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ, Էլիզ Տէր-Սուքիազեան, Նորիկ եւ Ռոզան Թահմազեաններ

-200,000-ական դրամ. Արմոնդ Ալեքսանդրեան, Եզնիկ Ղարիբեան, Հրաչ եւ Ադրինէ Տէր-Յովհաննիսեաններ, Հայկազ եւ Հրանուշ Ղարիբեաններ, Մարօ Բաղումեան-Ղարիբեան, Գալստան Փանոսեան,

-150,000 դրամ. Մասիս Դիլանչեան

-100,000 դրամ. Բալաս Դիլանչեան-Ղարիբեան

Հանգուցեալ Ռազմիկ Հայրապետեանի յիշատակին

-500,000 դրամ. Լիդուշ եւ Էդնա Թէյմուրեան-Ղարիբեաններ

-300,000-ական դրամ. Հայ Ուս. Զհարմահալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի վարչութիւն, Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ, Թադէոս եւ Հրաչիկ Մինասքանեաններ, Աբդալ Յովսէփեան

-200,000-ական դրամ. Իւղաբեր Մանուկեան, Դիանա Ղարախանեան, Մեսրոպ Թահմազեան, Վազգէն եւ Արաքս Օհանեաններ, Սոնիկ Կիրակոսեան

-150,000 դրամ. Աբրահամ եւ Վոլգա Մեսրոպեաններ

-100,000 դրամ. Անուշ Սարգիսեան

-50,000 դրամ. Սամուէլ Ասատրեան

Հանգուցեալ Փայլիկ Ղազարեան-Դաւթեանի յիշատակին

-400,000 դրամ. Թադէոս եւ Հրաչիկ Մինասքանեաններ

-300,000 դրամ. Սուսանբար Ղազարեան

-200,000 դրամ. Կանանց հոգեւոր լսարան եւ «Շուշանիկ» երգչախումբ, Լուսիկ Ղազարեան-Յովսէփեան

-100,000-ական դրամ. Մերի Աղախանեան, Ղազար Թահմազեան

Հանգուցեալ Արամ Ծատուրեանի յիշատակին

-1,000,000 դրամ. Հայոց Ազգ. «Արմէն» կրթահամալիրի տեսչութիւն եւ ծնողական խորհուրդ

-500,000-ական դրամ. Սուսանբար Մկրտչեան, Մովսէս Ծատուրեան, Վազրիկ Մարկոսեան

-300,000 դրամ. Մասիս Քեշիշեան

-250,000 դրամ. Գուրգէն Թահմազեան

-150,000-ական դրամ. Զաւէն Մուրադեան, Արսէն Շահբազեան, Նորիկ եւ Ռոզան Թահմազեաններ

-100,000 դրամ. Բաֆֆի Մուրադեան

Հանգուցեալ Երեմիա Զաւահիրեանի յիշատակին

-1,000,000 դրամ. Աշխէն Մկրտչեան

-500,000-ական դրամ. Ռոզի Մելքոմեան, Թելմա Հայրապետեան

-300,000-ական դրամ. Անուշ Յովհաննիսեան, Սեւանա

Խաչատրեան, Արաքս Պօղոսեան, Նորիկ եւ Սոնա Յարութիւնեաններ

-100,000-ական դրամ. Ալբերթ Սիմոնեան, Իւղաբեր Մանուկեան

Հանգուցեալ Քնարիկ Դաւթեան-Բարսեղեանի յիշատակին

-500,000 դրամ. Փաթրիկ Սահակեան

-400,000 դրամ. Քլար եւ Արաքս Խաշաքիներ

-200,000-ական դրամ. Սոնիկ Կիրակոսեան, Աւուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ, Սարօ Ծառուկեան

-50,000 դրամ. Սամուէլ Ասատրեան

Հանգուցեալ Հրանդ Ղազարեանի յիշատակին

-200,000-ական դրամ. Անուշ Յովհաննիսեան, Ռուբինա Ակոն

Հանգուցեալ Կակաչ Քեշիշեան-Ծատուրեանի յիշատակին

-1,000,000 դրամ. Արղուդ Քեշիշեան

-600,000 դրամ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կանանց յանձնախումբ

-500,000-ական դրամ. Ն. Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութիւն, Ռուբէն Ղարիբեան, Էդիկ Մկրտչեան, Գոհար Իսայեան, Հայկազ Ղազարեան

-300,000-ական դրամ. Հայ Ուս. Զհարմահալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի վարչութիւն, Անիթա Ալեքսանդրեան, Վարուժ Մատթէոսեան, Կարօ Ծատուրեան, Վահիկ Թորոսեան

-200,000-ական դրամ. Տէր Խաչատուր Քհնյ. Զարգարեան, Հռիփսիկ Համբարչեան, Օֆֆիկ Գէորգեան, Վրոյր եւ Սիրվարդ Պետրոսեաններ, Վիգէն Մարգարեան, Աննիկ Քեշիշեան

-150,000-ական դրամ. Համասփիւռ Մարգարեան, Հայկազ Ղարիբեան

-100,000-ական դրամ. Արաքս Աւետեան, Արմենակ Ծատուրեան, Ռոբերթ եւ Անժել Պետրոսեաններ, Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ

Հանգուցեալ Էդիկ Ազարանգի յիշատակին

-500,000-ական դրամ. Տ. Խաչատուր Քհնյ. Զարգարեան, Սամսոն Զարգարեան,

-300,000-ական դրամ. Արմէն Կարապետեան, Ասլան Սարեան, Սաթի եւ Սոնա Զարգարեաններ, Նորիկ եւ Ռոզան Թահմազեաններ, Եղնազար Նորժշանեան

-250,000-ական դրամ. Գուրգէն Թահմազեան, Ռաֆֆի Թահմազեան

-200,000-ական դրամ. Ռազմիկ Մարկոսեան, Եզնիկ Մարկոսեան, Նվարդ Վարդանեան, Սասուն Դադանեան, Ռոլանդ Ղարախանեան, Էլիզ Տէր-Սուքիազեան, Վոլգա Թահմազեան, Հայկազ եւ Հրանուշ Ղարիբեաններ, Այիդա Կիրակոսեան, Ռաֆֆի Պարսամեան

-100,000-ական դրամ. Աբգար Ղազարեան, Սամուէլ Ասատրեան, Շուշան Թահմազեան, Մերի Աղախանեան, Գառնիկ եւ Սոնիկ Մելիքեան, Նունուշ եւ Թինա Սարգսեան

Հանգուցեալ Էլենա Դիլանչեանի յիշատակին

-500,000 դրամ. Սարօ եւ Ալիս Դիլանչեաններ

Հանգուցեալ Հրանուշ Առաքելեանի յիշատակին

-2,000,000 դրամ. Հայկազ Մուսախանեան

-1,000,000-ական դրամ. Ալիս Մուսախանեան, Ռիմա Մուսախանեան

Հանգուցեալ Յարութ Յակոբեանի յիշատակին

-1,000,000-ական դրամ. Սուլթան Թորոսեան, Վրէժ Մինասեան

-500,000-ական դրամ. Ալէն եւ Իզաբել Զարդն Դուաւուդներ, Արաքս Պօղոսեան, Ալենուշ Պօղոսեան

-250,000-ական դրամ. Բալասան Դիլանչեան-Ղարիբեան, Մինաս Թահմազեան, Մասիս եւ Այիդա Մինասքանեաններ, Ժիրայր եւ Մելինա Ղարիբեաններ

-200,000-ական դրամ. Հայկազ եւ Հրանուշ Ղարիբեաններ, Մարօ Բաղումեան-Ղարիբեան, Ծաղկուշ Յովսէփեան

-150,000 դրամ. Վարդուշ Յովսէփեան

<u>Ն.Ջ. Հայոց Ազգ. «Քանանեան» եւ «Կաստարինեան» դպրոցներ</u>

2015-16 *եւ* 2016-17 *թթ. ուսումնական տարեշրջանների Աւարտականի վկայականաբաշխում*

-5,000,000-ական դրամ. Սելին Խոջեմալ

-1,000,000-ական դրամ. Անի Աբգարեան, Փիւնիկ Ասատրեան, Արփիար Դաւթեան, Էրիկ Դիլանչեան, Սարհատ Դիլանչեան, Վանանդ Իսաղուլեան, Անգինէ Կարապետեան, Լիլիթ Հայրապետեան, Վանէ Ղազարեան, Արփա Մարգարեան, Վանէ Յարութիւնեան, Քրիստին Նազարեան, Թանգիկ Զարդն Դաւուդ, Մարալ Քեշիշեան, Նինել Օրոջեան

-500,000-ական դրամ. Ն.Ջ. Հայոց ազգ. Մանկապարտէզ-Նախակրթարանի Տեսչութիւն եւ Ուսուցչական կազմ, Ն.Ջ. Հայոց ազգ. «Արմէն» կրթահամալիրի Տեսչութիւն եւ Ուսուցչական կազմ, Սիփան Անդրիասեան, Արիւն Թահմազեան, Արմինէ Թորոսեան, Արիւն Թորոսեան, Արմինէ Խաչիկեան, Վերգինէ

Համբարձում, Նորվան Մարկոսեան, Հրաչիկ Միրզախանեան, Վերգինէ Միրզախանեան, Արամէ Մովսիսեան, Գէորգ Մովսիսեան, Ժուլիէթ Սէթաղայեան, Թանգիկ Վարդանեան

-300,000-ական ռիալ. Արայիկ Սիմոնեան

-200,000-ական ռիալ. Թադէ Մկրտչեան, Թադէ Յակոբեան, Նարեկ Յովսէփեան, Լուսինէ Սէթաղայեան

Նոր Ջուղայի Կիրակնօրեայ դպրոց

-1.000.000 ռիալ. Էրւին եւ Էդլին Յովսէփեաններ

-1,000,000-ական ռիալ. Աչօ Պօղոսեան՝ Աստղիկ Ղարիբեանի յիշատակին, Հեղգա Ղազարեան, Մինաս Ղուկասեան

-700,000 ռիալ. Մահմուդիէ

-500,000-ական ռիալ. Խաչիկ Ռոստոմլու, Ոմն, Ոմն պարսկուհի

-Սնունդ եւ սննդամթերք. ոմն պարսկուհի

-Ճաշ եւ թխուածքներ. Սոնա Թումաթարեան՝ Համբարձում տօնի առթիւ

-Քաղցրաւենիք. Արսինէ, Ոմն

-Սուրճի հիւրասիրութիւն. Ժենիկ Տէր-Գրիգորեան, Այվէն, Գասպար Ճահմիրզայեան

-Թխուածքներ. Ն. Ջ. Հայոց ազգ. «Քանանեան» դպրոց, Օֆիկ Ղազարեան, Վարդուշ Ղազարեան, կոյսեր, ոմն պարսկուհի

-Զատկայ հաւկիթ եւ քաղցրաւենիք. Մառիթա Մովսիսեան

-Գուլպայ. Մարգարիտ Զարգարեան

Ստուգում նախորդ համարիս

Ս. Գէորգ եկեղեցու անւանակոչութեան տօն անւան տակ տպագրուած նւիրատուութիւնները Ս. Մարգիս եկեղեցու անւանակոչութեան տօնին է պատկանում։

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առընչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններինը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան մասնաճիւղինը՝ Վիոլէթ Յարութիւնեանը եւ Աիդա Մուրադեանը։

Որոշ լուսանկարներ տրամադրում են Գեւիկ Խաչատրեանը եւ Ֆոտո Հայկը։

ՄԵԾ ՀԱՅՔԷՆ
خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵
Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98-31-36243471-2
Fax: +98-31-36270999

Խաչքարն իբրեւ կոթող-յուշարձան հայ միջնադարեան քարեղէն մշակոյթի ինքնատիպ դրսեւորումներից է: Այն զուտ հայկական է եւ պատկանում է միայն հայ ժողովրդին: Դա խաչի պատկերով, զարդաքանդակների յօրինւածքով ուղղաձիգ կանգնեցւած սալաքար է: Միջնադարեան Հայաստանում քանդակւել ու կանգնեցւել են անհամար քանակութեամբ բարձրարւեստ խաչքարեր: